

Հրատարակութիւն՝ Պ. Լեհոն Մելիքի

ՍՈՒՍԱՆ ԲԱԶՈՒ ԱՌՔԱԹՆԵՐԻՑ

Յառաջաբան՝ Բանասէր - Քննադատ
ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆԻ

1940

Թէգրան, Տղարան «ԲՈԲՈԽ»

891. 99
4-95



891.99
4-95

NOV 2014
423

Հրատարակութիւն՝ Պ. Լեհին Մելիքի

ՍՈՒՍԱՆ ԲԱԶՈՒ ԱՌՔԱԹՆԵՐԻՑ



Յառաջաբան՝ Բանասէր - Քննադատ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՍՆԻ

1940

ԹԵՂՐԱՆ, ՏՊԱՐԱՆ «ԲՈՅՈՒ»

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Զարմանալի գուգաղիպութիւն էր այդ:
իրանահայ յայտրի նկարիչ Սարգիս Խաչատրեան նոր
վերջացրել էր պ. Ռոման Խսայէվի հանգուցեալ մօր՝ Տիկին
Զառվարդի մեծադիր գունաւոր նկարը: Յաջորդ օրւայ երե-
կոյեան պ. Ս. Խաչատրեան մեկնելու էր Հնդկաստան:

Պ. Ա. Խօջամիրեան, «Թէհրան» հիւրանոցի մի շքեղ
սրահում զետեղել էր տւել նկարչի գործը: Հրաւիրնած էին
մի քանի հոգի այդ առթիւ, քանի որ պ. Ռ. Խսայէվ կա-
ռուցել էր տալիս Թէհրանի Ս. Աստւածածին եկեղեցին ի յի-
շատակ իր հանգուցեալ մօր Տիկին Զառվարդին, որի նկարը
ևս հետագային պիտի զետեղւէր նորակառոյց եկեղեցու մէջ:

Հրաւիրեալների շարքին էր մեր քաջածանօթ ինժի-
ներներից պ. Լևոն Մելիքի: Սպասելով ուշացողներին, խօ-
սակցութիւնը հայ գրականութեան և մեր տեղական հրատա-
րակութիւնների շուրջ էր դառնում:

Պ. Լևոն Մելիքի, որ միշտ խանդակառած է հայ
գրականութեամբ, շատ սրտաբացօրէն առաջարկեց իր վրայ
վերցնել «Սուսան-Բաջու» յօդւածաշարքերի հրատարակու-
թիւնը մի հատորի մէջ, թէ՛ մնայուն դարձնելու և թէ՛ ևս



առաւել տարածելու գաւառական ու գիւղական շրջաններում
այդ գրւածքները, որոնք ժողովրդի լեզով արծարծում էին
մի շարք կենսական խնդիրներ:

Խօսք չը կար որ այդ սիրավիր առաջարկը մեզ մեծ
ուրախութիւն պատճառեց և մենք մեծ ոգեորութեամբ
անցանք գործի:

Հրատարակութիւնը գլուխ բերելու մի շարք գործո-
ղութիւններ քիչ երկար տևել տւին գործադրութիւնը, նաև
հնարաւորութիւն չը տվին հրատարակել ամբողջ յօդածա-
շարքերը, սակայն զուգաղիպութիւնը այնտեղ եղաւ որ գիր-
քը սկսեցինք «Ռոման Դայէվի կառուցելիք Եկեղեցու» յօդ-
ածով, երբ այդ օրն իսկ խմբւած էինք նրա հրաւէրով, նոյն
այդ եկեղեցու համար նկարւած Տիկին Զարվարդի սկարը
տեսնելու:

* *

Մի քանի խօսք կ'ուզէինք ասել պ. Լևոն Մելիքի
այս գեղեցիկ և քաջալերիչ վերաբերմունքի համար:

Ովքեր որ ծանօթ են նրան, արդէն զիտեն թէ ի՞նչ
պայծառ ու աղնիւ հոգու տէր է նա, ի՞նչ վաեմ զգացումներով
տոգորւած մի անձ:

Մեր նպատակը չէ երկարապատում ներփողներ հիւսել
նրա հասցէին, այլ զլխաւորապէս կ'ուզէինք այս մի քանի
բառով դրսեորել նրա այդ բարձր արժանիքները և շեշտել
որ մեր ներկայ օրերին ևս առաւել զգալի են նման գրասէր
անձանց անհրաժեշտութիւնը՝ նպաստելու մեր գրականու-
թեան զարգացման ու բարգաւաճման:

Մեր ջերմ երախտիքը յայտնելով մեր սիրելի մեկնաս



պ. Լևոն Մելիքին, հանրութեան ենք ներկայացնում Սուսան
Բաջու Սոհբաթների մի մասը, որի առաջաբանը գրելու մի-
րալիրութիւնն է ունեցել հանրածանօթ բանասէր-քննադատ
պ. Արամ Երեմեանը:

Թէհրան,
15 Հոկտ. 1940 թ.

Հ. Գ.



ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Իրանահայութեան ամենաառաջին զաւեշտաթերթն է «Բոբոխ»-ը, որ երկու տասնեակ տարիներից ի վեր լոյս է տեսնում իրանի մայրաքաղաքում—Թէհրանում։

Ա. Ժ ժամանակաշրջանում թերթը քննադատութեան բովից է անցկացրել հայ հասարակական կեանքի շատ կարևոր էջերը, պատկերել է շատ էական թերթիւններ ու բացեր և այդ գծով էլ ձգտել է ծառայել իրանահայութեան մտաւոր ու բարոյական մակարդակի բարձրացման վեհ գործին։

Սակայն, անվերապահօրէն պիտի արձանագրել, որ «Բոբոխ»-ի բովանդակութեանը միշտ էլ առանձին փայլ ու երանգ են տւել Սուսան Բաջու զրոյցները։ Կարճ ու սեղմ գծագրութիւններ են դրանք, որոնք, մեծ ւասամբ, պատկերում են ժամանակի իրանահայութեան, գլխաւորապէս Թէհրանի հայ ժողովրդի, տարբեր խաւերի ընկերական, ընտանեկան կեանքի և առնասարակ նրանց վարք ու բարքի, կենցաղի պակասաւոր, թերի և մոայլ կողմերը։

Նշենք և այն, որ Սուսան Բաջին ունի իր մտքերն ու հայեացքները, իր դիտողութիւնները համով-հոտով պատմելու, պարզ ու կտրուկ դարձւածքներով գծելու և մանաւանդ



հիւմօրով արտայայտելու իր ինքնուրոյն ձևերն ու ոճը, յատկանիշներ, որոնց շնորհիւ էլ նրա զրոյցները ոչ միայն գրաւում են ձեզ, այլ և յաճախ ձեղանից խլում են ժպիտներ: Այդ առանձնայատկութիւններն էլ վկայում են Սուսան Բաջու գրական կարողութեան երգիծական ձիրքի մասին:

* *

Թերեւս ոմանք մինչև օրս էլ դեռ չզիտեն, որ Սուսան Բաջու այդ համեղ և սրամիտ «սօհբաթների» հեղինակն է «Վերածնունդ»—«Յորոխ» թերթերի խմբագիր ա. Հայկ Գարագար: Զգլաւեն, որ նրա գլուխ արտապրութիւններն են ժամանակի իրանահայութեան իրական կեանքը ցոլացնող այդ փոքրիկ նկարները:

Եւ իրօք, թերթի խմբագիրն աչալուրջ կերպով հետեւ է իրանում ապրող հայութեան շատ կարեսը ինդիրներին և երեան է հանել շատ ուշագրաւ տեսարաններ, գծել է շատ դէմքեր, միաժամանակ մատնանիշ է արել բազմաթիւ թերութիւններ, բացեր, պակասութիւններ և քրքիջը բերնին, համարձակ գծագրութեամբ դրել է իրապարակի վրայ:

Բայց դիտենք անմիջապէս, որ նա ծաղը ու քննադատութիւնն երբէք զո՞չ չի բերել գրական գոենկութեան: Երբէք իրեն նպատակ չի դրել՝ գաւեշաներ գրելով, «սօհբաթներ» անելով, ընթերցողներին ծիծաղեցնել ու գւարճացնել Ընդհակառակը, նա ընդհանրապէս անաչառ քննադատութեան է ենթարկել հասարակական տարրեր իւաւերի ու հոսանքների բացասական, հիւանգաղին, մոայլ և տպեղ կողմերը, նրանց թերութիւններն ու բացերը: Թերեւս այդ երևոյթներով էլ պիտի բացատրել, որ նրա զրոյցները ժողովրդի կեանքը



պատկերող մի-մի պարզ երգիծական նկարներ են, որոնք իրենց բովանդակութեամբ ձգտում են մի նպատակի-կրթել, դաստիարակել և ազնւացնել ժողովրդին: Արդարեղ էլ կայանում է իւրաքանչիւր գաւեշտական գրականութեան արժէքը:

* *

Ահա «Յորոխ»-ի էջերում ցրւած Սուսան Բաջու զրոյցների մի որոշ մասն այսօր լուս է տեսնում առանձին գրքով, որի համար պարտական ենք թէհրանարնակ ինժինէր Լեւոն Մելիքին: Այս գրասէր և ազնիւ հայր հոգացել է գրքի ամբողջ ծախքը: Նրա շնորհիւ էլ իրանահայ գրականութիւնն այսօր հարստանում է մի նոր ժանրի երկով:

* *

Շուրջ 210 էջերից բաղկացած մի հատոր է Սուսան Բաջու գիրքը, որ իր բովանդակութեամբ ընդգրկում է մի քանի հիմնական բաժիններ,—դէմքեր ու դէպքեր, տօներ, բարքեր, խրատական, ընտանեկան, ընկերային կեանք և դէսից-դէնից:

Կեանքի իրական պատկերներ են դրանք, որոնք եթէ իրենց գելարւետական կառուցւածքով անպաճոյճ են, ապա բովանդակութեան տեսակէտից անպայման հասարակական արժէք են ներկայացնում:

Գրքում ուրոյն տեղ են գրաւում «սօհբաթները»: Դրանք նախանձ, բամբասանք, չտեսութիւն, պոռոտախօսութիւն, քէփ, փողապաշտութիւն և այլ բացասական երևոյթներ դրսերող սեղմ ու ամփոփ զրոյցներ են: Սուսան Բաջին կարողացել է իրանահայ կեանքում թագնւած այդ մոայլ տպեղ, ցաւոտ զծերը լուսաւորել և ընթերցողի առջև դնել Այդ տեսակէտից էլ արժանի են ուշադրութեան:





Հետաքրքրութեամբ կարդացւում են նաև խրատական բաժնի զրոյցները, որոնք իրենց բովանդակութեամբ ունեն դաստիարակչական բնոյթ:

Սուսան Բաջին դիտելով իր ժամանակի նոր սերնդի կեանքի բազմերանգ էջերը, ցաւօք տեսնում է, որ նրա մէջ բացակայում է ընդհանուր զարգացումն ու դաստիարակութիւնը, տեսնում է, որ նրանցից շատերը զուրկ են պարտաճանաշութեան ու երախտագիտութեան զգացումից, տեսնում է, որ նախանձն ու ատելութիւնն աւերիչ դեր են կատարում նրանց կեանքում, տեսնում է, որ նրանք չեն հագնելում պարզ, համեստ, մաքուր: Ուստի, բարոյական յորդորներով կոչ է անում՝ դէպի պարտականութեան գիտակցութիւն, դէպի ինքնաճանաչութիւն, դէպի պարզութիւն: Այդ էջերից յիշատակութեան արժանի են՝ «Ո՞րտեղ ա զարգացումը», «Պարտաճանաչութիւն ու երախտագիտութիւն», «Ծուռ մի մտածէք», «Պարզ հագներէք ու մաքուր», «Մի նախանձէք» և այլն:

Ըստանեկան կեանքի նկարները ձեզ տանում են իրանայ օջախներից ներս, ուր դուք տեսնում էք նոյնպէս մի շարք բացեր և թերութիւններ, որոնք նսեմացնում են ընտանեկան կեանքի վեհութիւնն ու գեղեցկութիւնը: Այնտեղ մի էջում, դուք լսում էք մարդ ու կնկայ «Ժարիֆները», մի այլ տեղ տեսնում կնոջ հակադիր կենցաղը, մի ուրիշ տեղ ծանօթանում էք նրանց խորհուրդների հետ:

* * *

Այդ զրոյցներն ու «սօհբաթները», անկասկած, բոլորն էլ հաւասարապէս պայծառ գոյներով չեն վրձինւած: Նրանք



ամենքն էլ հաւասարապէս յստակ, սահուն չեն: Այնտեղ բոլոր դէմքերն էլ երևան չեն գալիս որոշ ու պարզ: Բոլոր պատկերներն ու տեսարաններն էլ չեն գծւած բնական ու կենդանի: Սակայն, չնայած նշւած հանգամանքներին, այդ զրոյցները, մեծամասնութեամբ, ունեն այնպիսի դրական գծեր, որոնք բարձրացնում են նրանց գրական արժեքը:

Էական ու կարեոր յատկանիշներից մին ու էալիստական բովանդակութիւնն է: Այնտեղ դուք չէք գտնում ոչ ոմանտիկ գծագրութիւններ և ոչ էլ սիմոլիկ նկարներ: Ընդհակառակը, տեսնում էք փաստերի, իրողութիւնների առարկայական նկարագրութիւններ, տեսնում էք հասարակական ընտանեկան կեանքի զաւեշտական փոքրիկ նկարներ, որոնցից շատերը գծւած են պարզ, բնական կերպով, առանց աւելորդ մանրամասնութեան, առանց չափազանցութեան: Կառուցման այդյատկութիւնը հեղինակի համար բնորոշ է և ուշագրաւ:

Գրքի յատկանշական գծերից մինն էլ, որ էլ աւելի բարձրացնում է նրա արժեքը, գրաւիչ սրամութիւնն է ու երգիծանքը, որ արտայայտում է մերթ զաւեշտով, մերթ քրքիջով, մերթ բարի ծիծաղով, մերթ զարոյթով և մերթ վշտով, գծեր, որոնք իրար ներդաշնակելով՝ կազմում են մի ամբողջութիւն:

Աւս բոլորի վրայ աւելացնենք Սուսան Բաջու պատմելու սահուն ձեր և անպահոյն լեզուն, որ կրում է ժողովրդական բարբառի և արևելեան լեզւի կնիքը:

Առհասարակ, մի հանգամանք պարզ է, որ ա. Հայկ Գառագաշն այդ զրոյցների մէջ հանդէս է բերել դիտողութեան






ընդունակութիւն, ուսումնասիրութեան կարողութիւն, կառուցելու շնորհք և, որ կարեորն է, երգիծական ձիրք։ Ահա թէ ինչու նրա իրանահայ զբականութեան նւիրած առաջին հատորը, որ արժանի է ուշազբութեան, ջերմապէս յանձնարարում ենք զբասէր հայ հասարակութեանը։

Նոր-Զուղա

ԱՐԱՄ ԵՐԵՄԵՍՆ

4 Սեպտեմբեր



ՊԵՄՔԵՐ ԵԽ ՊԵԳՋԵՐ




ՈՈՄԱՆ ԻՍԱՅԵՒԻ

ԿԱՌՈՒՑԵԼԻՔ ԵԿԵՂԵՑԻՆ

Յարով - Աստծու բարին, լոյս ձեզ տեսնողաց, ողորմի-
ձեր ծնողաց, սարը սարին չի հանդիպի, մարդը մարդու կը հան
դիպի: Շնորհակալ եմ, շատերը հարցրան քի Սուսան Բաջին
ի՞նչ էլաւ, չը տա՞յ փոխադրւել ա վերին Երուսաղէմ: Շա-
տերն էլ ուրախացան քի ըստուց էլ պրծանք:

ՀԷՐ, բալամ, մակեար ես սիրո չունեմ: Ողորմած հո-
գու հետ, երբ թազզա պսակւած իմ, մէ անդամ աշխարհ ման
գալու գնացիմ: Ամմա էն օրւանից շատ բան էր փոխւէ,
պէտք էր որ մէկ էլ տեսնիմ: Ես էն պառաւ կնիկներից չ'եմ
որ հին միտքերով մնամ, ի՞նչ որ խելօք ա, ի՞նչ որ խելացի
ա պէտք ա ամենքը սովորեն, կ'ուզի պառաւ ընեն, կ'ուզի
ջահել:

Արդ ընի ձեր խթմաթին, գնացիմ աշխարհ ման էկամ,
ես էկամ: Ասելու շատ բան ունեմ, շատունց ա իրար չ'ենք
տեսէ, բարեկամներս կարօտցեր էն, թշնամիներս զարմացեր
էն, շատերն էլ թազա էն՝ ինձ չ'են ճանաչի: Ամմա ստոնք
հմենը մէ կող ուրիշ անդամ կը խօսանք, հիմա ասլըքեալ-
մաթլարս՝ էս իմ պատւական Ռօման իսայէվն ա, բարիքեալ-
լա, բարիքեալա, շատ ապրի, շատ ուժը ու արև տեսնի,
միշտ գործը յաջող էլեի, տամադը չադ, քէֆը քօք, ձեռ տայ
հողին, հողը փող դանայ, չորս տովը ուրախութուն ու



օրհնութուն էլնի, բա՛րիքեալա:

Հիմա ասէք՝ ի՞նչ ա էլէ: Էլ ի՞նչ կ'ուզէք որ էլնի, ևս ճամրին իմ, հալամ մէ ամիս էլ աւել բալքեամ ուշանիմ, հէնց որ իկիտ իսայէվիս էդ քաջ գործը յսամ, արօպլան նուտամ, թռամ էկամ որ ի՞նքս էլ ներկայ բնեմ ու օրհնեմ իրան:

Բալամ էսքան տարի ումր արամ, մէկը չը տեսամ դուս գար մնն մննակ մէ եկեղեցի շինէր: Շուխի չի, թան չի՝ ամնն մարդի բան չի: Փողն էլ որ ունենաս, սիրտն ա պէտք: Ես օրերին էդ սիրտը ունենալը աւելի դժար ա քան թէ փողը:

Աի՞րո, Ռօմանի սիրտն եմ ասում: Էս ոչ առաջինն ա, ո՛չ էլ վերջինը, երբ ասես, որտեղ ասես տամնեակ հազար-ներով ա տւէ, մարտ մարտ աշխատէր ա, մարտ ծախսեր ա, մարտ էլ հըմնենքին օգնէր ա, էլ որբի, գաղթականի, դպրոցի, հիւանդանոցի, հըմնենի դարտին էլ հասեր ա: Շա՛տ ապրի:

Հիմա էլ դուս ա էկէ տղամարդի պէս, էն Աստծու օրհնած մօր յիշատակին, մէ տանա մննծ օխտը-ուշը հարուր հոգինոց եկեղեցի ա շինում, էլ ի՞նչքան ծախս կ'ունենայ. Աստւած գիտի, ևս ասեմ օխտանասուն, ութսուն հըզար թուման, դու ասա իննանասուն, հարուր հըզար:

Ծնող սիրող, մօր դադրը իմացող մարդ ե՞ս ուզում, էդ իմ տղամարդ իսայէվն ա:

Աստւած ճանաչող, Աստուծու տուն շինող, սաղ ժողովուրդին երջանկացնող մարդ ե՞ս ուզում. էլի իմ մարտ իսայէվն ա:

Թագա ծնած՝ միրտւող էրէխից թա պսակւողը, նշան-ւողից թա մնոնողը, հըմնն էլ պարտ պիտի մի ա՛ որ ծնո-դասէր իսայէվի է՛ պատւական մօր յիշատակին աղօթք ա-նեն ու օրհնանք կարդան:




Ի՞նչ որ ասեմ քիչ եմ ասէ: Թող երկինքի սուզբերը օրհնեն իրան, թող էն ազնիւ, պատիւով, անման Զարվարդի նողին լուսաւորւի:

Հէյ-Հէյ, էրնէկ ամնն մէր էսպէս մէ տղայ ունենար ու ամէն ժողովուրդ էսպէս բարերար:

Կիրակի օրը էրթամ մէ եկեղեցու շինութան գետինի օրհնելը տեսնեմ, ետով ձեզ հըմար կը պատմեմ:

Աստւած միշտ ջահել, հոգին պայծառ, ուրտը ուրախ, ջէրը լիքը, սաղ-սալամաթ պահի պահպանի ազգային մենծ բարերար մեր Ռօման իսայէվին:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆԴԻՍԸ



Ծաղկազարդ կիրակի օրը գնացիմ ժամ, բա՛հ - բա՛հ - բա՛հ, հասարակութուն, ի՞նչ հասարակութիւն, ծո՛փ, թամամ ծով: Հըմենն էլ ուրախ, հըմենն էլ պայծառ: Էկերին, հըմենն էլ հաւաքւերին, որ իմ աննման Հրաչի գործն տեսնին, հիմա կամէք Հրաչն ով ա, դէ՛հ Հրաչը հէնց ինքը թումանն ա, թումանն էլ ինքն իսայէվն ա, մեր փառքն ու պարծանքը, մեր աչքի լուսը, մեր պատւական քաղաքացին, մեր հըմէնի ուրախութունը:

Պատարագը որ պրծաւ, թափօրր եկեղեցուց ճանապարհ ընկաւ, էլ մէ խաբար էլաւ որ ես ասաս ոչինչ ինձի խեղղելու էն: Ճար ճամբա չը կար: Բերան ծաղիկների մէջ պոտնոցի վրայ էն օրհնած քուլունդը դրան մէշտեղը, մեր թամանն էլ տղամարդի պէս կանգնաւ առաջը, տէրտէրը աղօթքը պրծացրաւ, ճառն ասաւ, գովեստն հիւսաւ, փառաբանաւ ու ետով քի՝ «Մենծապատիւ մենծ բարերար, տուր ինձ Քրիստոսի ուսենին փոխարինող գործիքը»: Մեր իսայէվն էլ բարձրացրաւ քուլունդն ու էրկու ձեռով տւաւ իրան:

Էլ տես ի՞նչ խաբար էլաւ, Անթառամը, Ովսանէն, Եղսաբէթ բաֆին ուրախութունից լաց ին էլնում:

— Այ, դուրբան էդ ձեռներիդ, ասում էր Մարիամը:
— Լուս կաթի մօրդ հոգուն, օրհնում էր Գունազը:



— Հալու ընի մօրդ կաթը, խաչակնքելով աղօթում էր Մարինոսը:

Էլ ի՞նչ ասեմ օրհնանքին վերջ չ'ունէր: Էլ ջահել, էլ պառաւ, հըմենքն էլ հիացեր ին ու հաղզ արէ: Հըմէն կողմից խօսում ին:

— Տղամարդը ըսէնց կրնի:

— Էս ի՞նչ ա որ, էսէնց փողեր տասնեակ անգամներ ա տւէ:

— Որրանոցի, հիւանդանոցի, գաղթականի, հրմէնին հասեր ա:

Բա որ քուլունը տէրտէրը խփաւ գետնին էլ իրար անցան, առաջ վաղան, թելը կտրան, ինչ ա քի էրանց աչքովը տեսնին հըմեն բան:

Մէ պառաւ կընիկ ասում էր՝


— Էրնէկ ըստուր ծնողին:

Զ'եմ իմանում ով էր, ի՞նչ էր, մէ աղջիկ էն կողից վրայ տւաւ՝

— Էրնէկ ըստուր հետ պսակւողին:

Կարճ կապեմ, առօք-փառօք ամեն բան վերջացաւ ու ժողովուրդը տուն գնաց:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ





Վալլահ ի՞նչ ասեմ, զս զիմ մարդիկ տասը կը չափին
մէկ կը կտրին: Ի՞նչ որ ուզին անխն՝ օրը, սահաթը, գիշերը,
ցերեկը հաշվի կառնին, սարը, շառը, խէյրը կ'իմանին, եր-
րեմվերդին կը բացին, թասրին կը քցին, երազը կը բացատ-
րին, մինչև իսկ քուչիդ անցնող Փալչու կարծիքը կը հար-
ցընին ու թազա կը-որոշին՝ էս ինչ զործը էն ինչ սահաթին
անելը լաւ ա եա վատ ա:

Չ'եմ իմանում էս մեր պատւական Ամիրիսանենց ե-
ղին ի՞նչ հսապ ա արէ, ի՞նչ քրթաբ ա կարդացէ, ի՞նչ ֆալ-
չու, ի՞նչ ֆաքիրի մօտ ա գնացէ, որ վերցեր ա ու կըտա-
կում զրեր ա՝ մեռնելուցս յիսուն և արի ետոյ տեսէք ո՞վ ա
իմ ժառանգը փողերը տեէք վերցի էրթա:

Յիսուն տարի, յիսուն տարին ինքը մէ օմր ա: Մարդ
կայ էրէկւայ ասածը, գիշերւայ կերածը, առաւօտւայ
խմածը միտը շի, ինչպէսդ որ էս մեր գաւառի բաժանորդնե-
րից շատերը թերթը կարգում են, ամմա փողը որ չ'են տւէ
ըսկի միտները չի գալի, եանի մարդկանցից շատերը միշտ
իրանց տալիքը մոռանում են, ամմա առնելիքը՝ չէ:

Էղ ա որ Ամիրիսանենց եղիի ժառանգների հսապը մէշ-
տեղից գնացեր ա, ու հիմա որ մէ քանի տարի ա ձէն ձէնի
ա ընկէ քի փող են տալի՛ էն էլ ինչ փող, մէ միլիոն չի, էր-
կու միլիոն չի, տասը չի, քսան չի, քսան հինգ ա:

Հի, զրան չի, ֆլորան չի, քուրօն չի, տոլար էլ չի բառնդ
ա, արի տես ինչ խաբար ա: Աշխարհի էս ծէրից էն ծէրը՝ էլ
Ամերիկայ, էլ Եվրոպոս, էլ Սուրբիա, էլ Թուրքիա, էլ որտէ
որ կ'ուզէք մաշալահ-մաշալահ Ամիրիսանենցից ա ճարւէ:
Ե՞է՛ր թոռն ա, մէկը ծոռն ա, մէկը ծոռի կոռն ա, մէկն էլ
կոռի կոռն ա: էլ ինչ ասեմ, մինչև ընտեղ ա հասէ որ թա-
մամ էլեր ա ջղիների ասածը:

Մէ քաղցած մարդ, մէ օր գնաց մէ քաղաք, դէս-դէն
հարցրաւ քի էդ քաղաքի հըմննից հարուստ մարդն ո՞վ ա:
Ասան ֆլանքասը: Գնաց ֆլանքասի դուն, գուռը տւաւ: Շա-
ռէն էկաւ քի ո՞ւմ ես ուզում: Զաւաբ տւաւ՝ «Աղին ասա ազ-
գականդ էկեր ա»: Աղին վազելով քուչի դուն էկաւ տես-
նէր ով ա: Զը ճանաչաց: Սըալ արաւ՝ «Ամօթ չընի դու իմ
ի՞նչ ազգականն ես»: Մարդն ասաւ: «Բահ չ'ես խթար, ես
քու խանումի հարսանիքն եօրդան կարող հալլաջի թօխմա-
խը շինող նաջարի հօրաքրոջ տղի գեղիցն եմ...»

Աս քեզ ազգական: Հիմա էս տեսակի մարդն ինչքան
էն ճարւէ Ամիրիսանենց եղիի հըմար: Մարդ եմ ուզում որ
ջոկի, ջոկջոկի, ու ասի քի ով ազգական ա ով չի:

Վալլահ, նուրար Բաշին, որ 120 տարեկան մեռաւ,
ինձ կ'ասէր՝ «Սուսան Բաջի, քո մարդը էդ Ամիրիսանենց
եղիի հօրօղքօր կնկայ քրոջ ամուսնու ազգականներից ա»:
Ամմա ի՞նչ արած ես տեսնում եմ էնքան մլյդանը շուկուդ ա,
որ իմ մէջտեղ դան աւելորդ ա:

Ես էսքանը պէտք ա ասեմ որ ով ի՞նչ ուզում ա ա-
սի՝ զին ըիր, Ալլահ ըիր՝ Ամիրիսանենց եղիի ասլը թայֆէն
էն Ամիրիսան Ամիրիսաննեանն ա՝ որ Զուղա ա նստէ ու տղէն
էլ կոռւար Ամիրիսանն ա թէհրան: Ֆաղաթ մէ քիչ հարա-
քաթ ա պէտք որ բարաքաթը դուս գայ: Վասսալամ: Մնա-
ցածն էլ մի ուրիշ անզամ:

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ

ԱՐՑԱԿ ՉՈՊԱՆԵԱՆԻ
ՅՈԲԵԼԵԱՆԸ



Ս.Փ.Ք.Ե.րիմ, նախ շատ ապրեն ընդոնք որ էս մեր ան-
նման թանաստեղծ - թանառէր Արշակ Չոպանեանի 30 տա-
րիների զահմագը զադրդանի արան, ձեռք-ձեռքի տւած, մէկ
մարմին, մէկ հոգի էլած վերջապէս էկան իր կենդանի օրին,
իր աչքի առաջ, ցնծութունով ու սրտաբաց տօն բռնան:

Ազեար մէ մարդ 30 տարի մինակ հորի ջուր քաշած
ու մարդկանց ծարաւը կտրած էլուի, ալամ-աշխարհի գովես-
տին ու հազարաւորների օրինանքին կ'արժանանայ, ուր մնաց
որ 30 տարի, մարդ իր ջահել թովուն օրերից մինչև այր
կատարեալ ընելը, իր սրտի, իր խելքի, իր ապրած, իր կար-
դացած, իր սովորած, իր տեսած իմաստութիւնը, լուսը, սի-
րուն-սիրուն բառերով, անուշ քաղցր շէրերով, խելօք-խելօք
խօսքերով մարզարտի պէս շարի ու իր ժողովրդի, իր սիրե-
լիների երջանկութունը, առաջադիմութունը հուսկի:

Հազար-հազար նեղութուն տեսնի, զրկանք տեսնի,
տանջանք տեսնի, տառապանք տեսնի, հոգի մաշի, սիրտ
ատցնի, ամմա իր ազգի, իր լեղւի սիրոյն հըմէն բան թեթե
գայ իրան: Շատ անգամ իր հարազատներից, իր պաշտպա-
նած, իր զոված բարեկամ-լնկելներից փիսութուն, չարու-
թուն տեսնի, ամմա տոկա, զիմանա ու իր իտէալը ձեռից
չը տայ:

Էս ա մէ քանի պաշող, համեստ խօսքերով իմ ջան Ար-
շակ Չոպանեանի մենծ գործը:

Թո'ղ շատ ապրի, շատ արև ու օր տեսնի, չայ ժողո-
վրդի էս անկեղծ տօնակատարումը թո'ղ մոռանալ տայ իր
քաշած հըմէն զահմաթները:

Էս օրւայ օրը մէ լուսաճաճանչ արև ա կազմւել իր
գլխի վերը, իր սերմանած լուսը աշխարհի չորս ծէրերից, ուր
չայ կայ, չայ լեզու կայ, մէ մէ երախտագէտ ճառագալիթ
էլած գէպի իրան ա գնում օրինանքի, շնորհաւորանքի քաղցր
ու անուշ խօսքերով: Ի՞նչքան որ 30 տարւայ աշխատանքը
երկէն ա ու շատ, էրկու էնքան էս Մայիս 14-ը լուսաւոր ա ու
պայծառ ի՞նչքան որ դարտ ա ունեցել էս 30 տարւայ մէջ,
էս օրը իր բարձր արժէքով հըմէնը ջնջում ա, հըմէնը մոռացը-
նել ա տալիս:

Ուրախ էլի, Արշակ ջան, սաղ էլի սալամաթ, դու էլ
միշտ կաս ու տեղ ունես մեր հըմէնի սիրտի մէջ, դու տա-
րար յաղթանակը, դու տարար լուսէ պսակը, սիրտս էն 16
տարեկան օրերիս պէս խրում ա, աշխերիցս ուրախութան,
երջանկութան արցունք ա գալի: Աստւած քեզ ծնող մօրը
հոգուն լուս թափի, քեզ մեծացնող հօրն ողորմի, քեզ ունե-
ցող ժողովրդին պահպանի:

Էս մեր Սիրելի իրանի վարդ ու սոխակի բաղերից,
մենծ-մենծ շալիրների էս հոգեթով երկրից, սիրերգով Խայյա-
մի, զիւցազներգ Ֆերդոսու, աննման չափէզի, իմաստուն
Սաադու չայրենիքից, ուր քո հարազատներից հազարաւորներ
ապլում են երջանիկ՝ բերեր եմ քեզ շնորհաւորանք ու օրի-
նանք:

Դրիչդ միշտ սուր, սիրտդ պայծառ, հոգիդ կայտառ,
կեանքդ երկար, օրերդ խոշ, զործդ անմահ ընդ միշտ,
էյ յաղթական ու փառապանծ Զինւորը դու Մշակոյթի:

Քո անձնւէր՝

ՍՈՒՍՍՆ ԲԱԶԻ

ԱՐՏՈՒՐԻՍ ԳԱՐԱԳԱՆ

ՀԵՇ գիտի դունեայ հԵՇ, աշխարհը ոչոմի չի մնայ,
օղօրթ Էն ասէ, հըմէնը էկան ու գնացին, կը գան ու կէթան
մինակ լաւ անումը, լաւ գործը, լաւ յիշատակը կը մնայ:

Տամն օր առաջ մեր Արտաշէս Գարագաշին էլ յանձ-
նանք սառն գետնին ու էկանք տուն:

Ո՞վ ասի չ'ասի, ես մէ քանի քեալամա պէտք ա ասեմ
մնտուր մասին:

Քեաշկամ հըմէնը ընտուր կէս զահմաթը քաշած ըլ-
նին: Ճիշդ ա մէ մենծ գիտնական չ'էր, մէ մենծ գրող չ'էր,
մէ մենծ ուսումնական չ'էր, պարզ, համեստ, ժիր, աշխա-
տասէր մէ ուսուցիչ էր, վասսալամ: Ամմա իր էդ պարկեշտ
աստիճանի մէջ շատ աւելի ֆայդա, շատ աւելի օգուտ բե-
րաւ իրա ազգին ու ժողովրդին, իրա դոփրըվարին ու ծա-
նօթներին՝ քան իրանից շատ աւելի մենծ երը:

Ո՞րտեղ, ո՞ր քաղաքը որ գնաց, իր խելքն ու միտքը,
իր նպատակը դրաւ էրէխէքին ուսում տայ, իրանց հօր-մօր
լեզուն կարդան, խօսան, սովորեն, լաւ ու օգտակար մարդիկ
էլնեն:

Աստծու կիրակին ժամ գնաց երգաւ, աղօթաւ, հայ
Եկեղեցու պարծանքն ու պատիւն էլաւ, մեր հըմէնի սիրտը
խօշ արաւ:

Թաղում էր, հարսանիք էր, ուրախութուն էր, տօն

էր, ինչ որ Եկեղեցական հանդէս էր, հանգուցեալը ընտեղ
պատրաստ իր գործն էր անում, երգում էր, խօսում էր, միխ-
թարում էր՝ ուրախացնում:

Որբեայրի էր, անտէր էր, մենակ՝ անծանօթ մարդ էր,
իրար հետ չը սագւող մարդ ու կնիկ ին, ամուսնութան խըն-
դիր էր, ընտանեկան կոիւ էր, ինչ որ էր Արտաշէս Գարա-
գաշը կը գար կը հաշտացներ, կը համերաշխացներ, գործը
կը կարգադրեր ու էլը գիրքերը ձեռի տակ, չաթըրը գլխին,
կ'երթար իր գործի ետևը:

Համայնականի, Եկեղեցականի, Բարեգործականի, Էս
եա էն ընկերութան արձանագրութան, գրելու, հաշւելու
գործ էր, Արտաշէս Գարագաշից լաւը չը կար, կը քաշին
մէյդան:


Մէ խօսքով հըմէնի սրտին մօտիկ, հըմէնի դատին հաս-
նող, հայ լեզւին, հայ Եկեղեցուն սպասարկող՝ նաշիք ու ազ-
նիւ մարդն էր:

Ո՞վ չի ափսոսում որ ես չ'ափսոսամ: Աստւած թող
ողորմի իրան, անումը միշտ էլ կայ ու օրհնանքով կը յիշւի:

ՍՈՒՍՍՆ ԲԱԶԻ



ԳԱՂԹԱԿԱՆ ՆԵՐՆ



Գնացիւմ աչքովս տեսամ ու էկամ էդ բաղբախտ մարդկանց զիճակը էկ'ր են, ի՞նչ հալումն են էկէր, մէկի մէրն ամացէ, մէկի հէրը, մէկի կնիկը, մէկի բալէքը, մէկը մէ էրէխան աբերէ՝ մնայածը չը կան, միւսը ոչ ոքի չի բերէ՝ ի՞նքն ա ու ի՞նքը:

Հըզար դարդ տեսած, քաղցած, նըկեաբան, աչքերը ճամբին էկէր են իրանց հայրենիքը: Ամմա ի՞նչ կասէք որ հիմա իրանց հանդիսատ էն զգում, մինակ բացակաների հոգսն ա: Շատ ապրի, Աստւած պահի պահպանի մեր Մենծ թագաւորին, մեր Շահնշահին: Հըրամայեր ա հրմեն տեսակ օգնեն էդ խեղճերին, դարդերին համեն, կառավարութունը պէտք եղածն անում ա որ շուտ տեղբատեղ էլնեն, հանգստանան, իրենց զործով զբաղւեն:

Էս մեր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութունն էլ լաւ դիրար էկաւ, աֆֆերին, բարիքեալլա, շուտ մէ փող հանգանակաւ ու հասաւ խեղճերի դարդին: Խէյր ու արև տեսնեն ընդոնք որ սրտաբաց ձեռները տարան քիսակներին ու ի՞նչ որ կարող ին էդ մարդկանց հըմար տւան: Աստւած իրանց տամնապատիկը տայ, իրանց օրը խօշ անի, իրանց բալէքին պահի:

Օղորդ-օղորդի ես ֆիքը էմ անում քի ի՞նչ բան ա էս

Բարեգործական Մենծ Միութունը, ի՞նչ խելացի մարդ էր լուսահոգի նուսպար Փաշան, ի՞նչ որ մենծ մարդարէներն ասան էդ օրհնած մարդը գործով գլուխ բերաւ, հըմեն հայերին ձեռ-ձեռի կապաւ որ նեղ օրին, սկ օրին, դժբախտ օրին իրար համնեն, իրար օգնեն, իրար սիրեն:

Մարդու հոգին փառաւորում ա էս սիրուն գործից, փող տւողն էլ, փող առնողն էլ, փող բաժանողն էլ ուրախ էն էլնում որ իրար էն կապւում սիրոյ, բարեգործութան, մարդկութան, սոկէ շղթայով:

Էս հրմէնը իրա տեղը, ամմա պիտի ասեմ որ երկէն ակարաւանը էդ բաղբախտների, հալամ գալիս էն հա գալիս, պէտք ա բարեգործութան էդ սուրբ զգացումը մեր մէջ էլ էկէլ զարկ տանք, ուժ տանք, ի՞նչ որ կարող ենք անենք, օրինակ վերցնենք մեր մենծերից, մեր կառավարութունից, ի՞նչեր ասես չի անում մեր հըմենիս առողջութան, ու երջանկութան հըմար: Մենք էլ պէտք ա մեր ուժերով քօմակ կանգնենք:

Ո՞վ որ սիրող մենծ ա, զործը յաջող կընի, միշտ ուրախ կընի, աշխարհի դժւարութունը ծծաղով կը դիմաւորի:

Սիրաներդ մենծ պահէք, գութ ունացէք, խիղճ ունացէք, օգնեյէք, քօմակ կանգնէք ձեր հայրենակիցներին՝ որ Աստւած էլ ձեղ քօմակ կանգնի:

Էս մեր դւարի երկրում, էս պայծառ արեի, էս կապուտ երկնքի տակ, էս վարդերի ու սոխակների մէջ, հըմէն դարդ, հըմէն տիրութուն շուտ ա անցնում ու փոխում ա ուրախութան:

Ինշալլահ որ էկողները հըմենն էլ իրանց սիրելիների հետ ուրախ ու երջանիկ գործի կը լծւեն՝ մեր երկրի մեծ առաջի աղացման աշխատանքի. մշչ: Ամէն:

ԱՆԹԵՐԻՆ,
ԲԱՐԻՔԵԱԼԼԱՇ

Ազեար էս սիրահարւողներին հարց տաք, քի ինչպէսդ
էլաւ որ գժւան, մէկը կասի:

— Էղպէսդ մարալ զէմք չ'իմ տեսէ:

Էն մէկը կ'ասի:

— Էղէնց գիւղալ նազլու չ'իմ տեսէ:
Երրորդը կասի:

— Էղէնց ուսումնական չ'իմ տեսէ:

Ու հըմէն մէկը մէ բանը կը գովեն իրենց սիրահարու-
թունը բացատրելու համար: Աստւած հոգին լուսաւորի ողոր-
մած չամբարձումին էն էլ կ'ասէր:

— Էսէնց խելացի կնիկ չ'իմ տեսէ:

Հէյ-հէյ, ինչ որ ա, ստոնք մէ կողմ, մաղսուզս ուրիշ
բան ա: Մեր էս պատւական չայկական Ընդհանուր Բարեգոր-
ծական Միութան Թէհրանի Մամնաճիւղը մէ շատ լաւ գործ
արաւ, փող հաւաքաւ, — ու լաւ հաւաքաւ — տարաւ անտուն-
անտէր գաղթականներին բաժնաւ, — շատ լաւ արաւ — ամմա
հըմէնից գեղեցիկը, պատւաւորը, արուրովը էն էր որ մէ կար-
գին շնորհքով հաշիւ տւաւ փող տւողներին, որ իմանին քի
աշխարհում լոււ գործը էն ժամանակ ա լաւ՝ երբ լաւ վերջանայ:

Զէ քի՝ առանց հաշիւ, անկանոն, կիսատ-պոատ արւած բանը՝
ոչինչ չարժի:


Հիմա խօսքս բերեմ կ'ապեմ, ես էլ ստոնց հաշւի վրէն
սիրահարւամ:

— Բարիքեալլա, ա՛ֆֆերին, էսէնց հաշիւ թա հալա
երկէն տարիների մօտաթին ոչ գպրոյ, ոչ եկեղեցի, ոչ հա-
մայնական, ոչ էս, ոչ էն, ոչ մէկը չ'էր տուէ, որ մարդ փա-
ռաւորւէր, հասկանար քի իրաւ տւածը ուր գնաց, իր մաղսու-
տին հասաւ թէ՞ չը հասաւ, զահմաթ քաշողն ով էլաւ, ով
անձնւէր ու մաքուշ գործաւ:

Ազեար ուզում էն առաջից բռնեմ գամ, օշտր տափ-
թար կը լցւի ու չի վերջանայ: Ի՞նչքան ասան, ի՞նչքան գը-
րան, ի՞նչքան պահանջան, հիչ ֆայդա չ'արաւ: Թուրքերէն
ասում են «Ալլահտան քի օլման, Փէյղամբար նա՞ էլասըն»:
Աստծոց որ մարհամադ չըլնի, էլ ընգուր մարգարէն ի՞նչ
կարող ա անի:

Մարդ ինքը իրաւ պատիւր պանձը պիտի պահի, մարդ
ինքն իրաւ գործով պիտի նշանց տայ իրաւ ազնւութունն ու
ուղղութունը, ազեար չէ էս այեամը խրատելով ու մկրատե-
լով բան դուս չի գայ: Մեր պարսիկ աղբերները մէ սիրուն
մասաւ ունեն «Հար գոլի զադի, սարը խօսդ զադի»:

— Բա՛հ, բա՛հ, բա՛հ, ես քի հազզ արամ, գործը ըսէնց
կ'ընի: Զեռներդ չը ֆաւա, խէյր տեսնէք, ուրախութուն տես-
նէք, համ տւողն ա ձեզ օրինում, համ ստացողը: Էս բոլորը
իրաւ տեղը, բալքեամ հալաւ մեր էն՝ մէ նման միութուններն էլ
խելքի գան, ուզնան ձեզանից օրինակ վերցել, իրանց հա-
շիւները կարգի բերեն, որ փող տւողն էլ տեսնի միսիթարւի:
Երբ որ մէ խէյր գործի համար, մէ լաւ մաղսուդի համար,
դուռը ծեծեն, ուրախ-ուրախ բաց անի, ու սրտանց իր քօմա-
կը, իր աջակցութունը բերի խեղճերին, կարօտեալներին մը-
խիթարելու: Ամէն



Աստուած հոգին լուսաւորի Համբարձումի, մէ օր չ'եմ իմանում ինչ խօսք էլաւ մէ սիրուն պատմութուն պատմաւ: Ասում էր քի՝ «Սարերի վըրէն, ծառերի մըջին, չոպանը ոչխարներն էր արածացնում ու հըմէն զիշեր սաղ - սալամաթ տուն տանում, գեղ հասցնում: Մէ օր էլ մէ փոթորիկ, մէ՛ զուլում անձրև, մէ՛ կայծակ, մէ՛ ձէն, մէ՛ խարար ընկաւ սարերը որ խեղճ չոպանը, զուլիսը կորցրաւ չ'էր իմանում, ո՞ւր վագէր, ի՞նչպէսդ հաւաքեր իր ոչխարներին: Մէ՛ վաղթ տեսաւ ոչխաների կէսը չը կայ, ասաւ: «Յաղբախտներ, տեսնես որտեղ մոլորւան» ու վազաւ ետևներից: Էս կող, Էն կող, չը կան ու չկան: Մինչև երկինքը պարտաւ, անձրևը կտրաւ, ամպերը գնացին, արեր ծծաղաց ու մեր չոպանը տեսաւ մէ քարայրի միջից կարգո՛ւ, շարան, սաղ - սալամաթ դուս էկան էն ոչխարները որ կարծում էր քի մոլորւեր ին: Ուրախացաւ, շատ ուրախացաւ որ ինքը ըշթբա էր արէ, առաջ զցաւ էկաւ էն մէկների մօտ: Տեսաւ ի՞նչ, ըդո՞ւք ող կարծում էր խելքները գլխներին ա, թափւեր են ջուրը ու հըմէն էլ խեղդւել . . .

— չէ՛յ, աշխարհ, հէ՛յ, ասաւ ինքն իրան, ո՞ւմ իմ մոլորւած կարծում, ո՞վ մոլորւած դուս էկաւ:

Էս պատմութունը միտս ընկաւ երբ գնացիմ մեր Սըրբազնին տեսնիմ, ու իսձ ձէն տւաւ:—

— Մոլորւած ոչխարս, ե'կ, մօտեցի՝ տեսնեմ:

Երբ որ խօսացինք, շատ խօսացինք, տեսամ ինքն էլ հասկացաւ որ ագեար մոլորւածներ կան ոչ ես եմ, ոչ էլ իմ աղիդին եղողները, բալքեամ մոլորւածները մեզի իրա մօտ բամբասողներն ին:

Ի՞նչ որ ա: Խօսացինք ու հազդ արամ: Լաւ մարդ ա, բարի մարդ ա, հասկացող մարդ ա:

Ուրախ-ուրախ մեր պատւական Ռոման Խայէվի թարիքն արաւ, գովաւ, օրհաւ, ասաւ որ եկել ա նրա կառուցելիք եկեղեցու հիմքերն օրհնի:

Պէտք ա ասեմ որ Ղագունից Մարջան Բաջին ինձ մէ երկէն նամակ էր գրել, թարիք էր արել քի ժողովուրդը ինչ-քան ուրախ սրտով գիմաւորել էր Սըրբազնին, ինչ պատւական հացկերոյթ ին տւել Քէօրողլեանները:

Ես էլ Մարջան Բաջուն գրամ որ մեր Թէհրանն էլ պակաս պատիւ չի տւել, որ Սըրբազնը շատ խօշ ա էս իր ճամբորդութիւնից, մախսուսան որ մեր պատւական Արտաշէս Խօջամիրեանի հետ ա ճամբորդել: Դէ՛հ, պարզ ա, ով խօշ չի էնի էդ աննման հայի հետ ճամբորդի: Սըրբազնը ինքը ասող, խօսող, ծծաղացող, ուրախ, գլարթ, լաւ սրտի տէր մարդ, Խօջամիրեանն էլ քի Աստծու տւած ժպիտը իրեսին մարտ մարդ ա, էրկուսով խօշ ասեր, խօշ լսեր ու մէկ էլ Թէհրան են զուս էկէ:

Էս ա կիրակի օրը Հայոց եկեղեցու օրէքնի համաձայն 16 քաւորներով, մէնծ կարդ ու կանոնով, առօք-փառօք օծէլու ա Սուրբ Աստւածածնա եկեղեցու հիմքերը, Ռոման Խայէվն էլ փառաւորւելու ա, ընտրա մօր հոգին էլ հրձւելու ա որ էսէնց տղայ ա ունեցել՝ որ իր յիշատակն անմահացնում ա:

Գնացէ՛ք, հըմէնդ էլ գնացէ՛ք եկեղեցի, հալբաթ Սըրբազնը կը խօսայ, համ իրան կը տեսնէք, համ իր խօսքը կը լսէք, համ էլ եկեղեցու օծման ներկայ կը լինէք:
ՍՈՒՍՍԱՆ ԲԱԶԻ

Ա. ԱՍՏԻԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՇՈՒՄՆ

Ելը ողորմի համբարձումին. մէ լաւ խօսք կ'ասէր
«Սարերը յզի էն մուկ ծնելու համար»:

Ես էս խօսքը չ'եմ մոռանայ, մախսուսան շատ տեղին
ա էս մեր եկեղեցու օծման հետ:

Էս վերջին ամիսը ֆաղաթ մէ բան ինք լսում՝ «Դէ՛ն
շուտ անի, Խսայէվը սկսի եկեղեցին շինել՝ որ տեսնէք քի ինչ
օծում ենք անելու, շուքով, պատւով, փառահեղ»: Ասում ին
ու յետ ին ասում:

Բարերար Խսայէվն էլ զարմացել մնացել էր քի հէր էն
ամեն որ թաղա էրազ տեսնում ու չ'են թողնում որ սկսի
գործը:

Վերջապէս մարդիկ ճարւան որ ինդիրը պարզան ու
գործն սկսաւ ու մենք էլ սպասանք եկեղեցու «փառապանծ»
օծմանը:

Հիմա ի՞նչ ասեմ, թա բերանս բացում էմ բազիքի
բանգը թռնում ա: Ի՞նչու, որովհետև օօօրթ խօսքը սիրտներն
ա ծակում, ամմա ինչ ուզում էն ասեն ես ոտ չ'եմ դնի ճըշ-
մարտութան վրայ: «Ծուռ նստենք դուդ խօսանք» ասել են
մեր պապերը:


Հըմնից առաջ էդ մեր եկեղեցական վարչութունը
որ հարայ էր քաշում քի «60 հրզար թռւմանի եկեղեցին քի»

ա, մենք էլ 50 - 40 հրզար թռւման կրտանք որ մենծ եկեղեցի
շինեն», էդ է՞ր համաշ իրա ջորրաթը: Բարերար Խսայէվը 60-
70, 70-ան էլ 80-ի հասցրաւ, ամմա իրանք մէ 100 - 200 թռւ-
ման չը ծախսան որ օծման օրը մէ մենծ ջաղը բերել տին,
բակի արևմտեան կողմը խբին, աթոռներ դնին, պարսկերէն,
ֆրանսերէն թերթերի խմբագիրներին, կարևոր մարդկանց
հրաւիրին, կանոնաւոր ընդունելութուն անին, որ մարդիկ մէ
բան համկանին: Ագեար չէ էդ քան զալմաղալով թաւրիզից
էն ծերունազարդ Սրբազնին բերել, հայշ-հույ անելը ի՞նչ
փայդա ունէր: Վերջն էլ օծման օրը ժողովուրդը իրար վրայ
լցւաւ, ոչ մէ բան լւաւ, ոչ մէ բան տեսնւաւ, ոչ մէ բան
հասկացւաւ, ինչը ինչից ա՝ ոչ ոք չ'իմացաւ, մակեար հէնց
բնքը Եղեղեցական վարչութունն ու իր քաւորները:

Մէկ էլ որ, ակեար հայոց եկեղեցու օրէնքն ա մենք
մեր պապերից ու մամերից իմացեր ինք, որ քաւորը 16 հա-
տից աւել չի էլնի: Ստոնք օրը մէ քանիսը աւելացրան, մէ
օր 20 էլաւ, մէ օր 24, ետոյ հասաւ 50-ի, վերջին տաղիղին
մէկն էլ ճարւաւ էլաւ 51, (Օթուզ բիրի ականջընկանչի):

Հալամ ասեմ որ էդ էլ իրայ ձեն ունի, էս ժողո-
վուրդի մէջ շատ-շատ պառաւ նանիներ կան որ հոգապահոց
փողեր ունեն, իրանց տղի, իրանց թոռան, իրանց աղջկան
հրմար հրզար տեսակ նազը էն արէ ու էղէնց մէ օրւան ին
սպասում որ քաւորութուն յանձն առնէն: Պէտք էր էրկու
շաբաթ առաջ թերթերի մէջ յայտարարին, ժողովուրդն իմա-
նար, ով կ'ուզէր ինքը դիմեր, ինքը գար, նա քի ըստուր
գրին՝ չուզէր, ընդուր գրին՝ ուզէր, ու ինչքան որ գուս էկաւ
էնքան քաւոր էլնէր:

Ետով էդ ինչպէսդ էր . . . Ամմա հէնց էս էլ բաւա-
կան ա, շատ բան կայ ասելու, ինչ փայդա, ժողովուրդի ա-



ուածն ասում ա' «Հասկացողին մէկ, չը հասկացողին հազար:
Ժողովուրդ էր հաւաքւէ շատ, տեղ չըկար, ճար չը-
կար, անցք չը կար, հողերի բանձր գլխին մէ դասթա ջահէլ-
ջուհուլ, պատ ին քաշէ ու մարդիկ էլ ետև կանգնած, արկի
տակ իրար հետ խօսում ին:

— Ի՞նչ ա, ի՞նչ կայ, ի՞նչ էն անում:

Ու մատները երկարացրած թօօղի ին տալիս:

— Էս մարդապատի էն կողմում, ասում էն որ 51
քաւորով եկեղեցի էն օծում . . . Վասսալամ:

Աստւած շնորհաւոր անի: Ես էլ իմ կողմից շնորհա-
ւորում եմ Եկեղեցական Վարչութան. . .

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ



ԱՖՖԵՐԻՆ

ՊԱՏՄԱԴՐԵԱՆՆԵՐ



Հըմէն անգամ որ մէկը լաւ բան անէր, չար ու նա-
խանձ մարդիկ վատ ասին, օղորմած հոգի Համբարձումը կը
ջղայնանար, կրակ կը բռնէր, ու ես իրան կ'ասիմ:


— Համբարձում դու տարիքդ առած մարդ ես, աշ-
խարհ տեսած. փորձւած, հէր ես ջուշ ուտում, սպասի գործը
իրա արժէքը շանց կը տայ, սկերեսութունն էլ չ'ուզողին բա-
ժին կ'ելնի, բարկանալուց ի՞նչ դուս կը գայ...

Ես խօսքերի վրէն Համբարձումը կը հանգստանար ու
կ'ասէր.

— Օղորդ ես ասում, Սուսան Բաջի, «Շունը կը հաչի
կարաւանը կանցնի» ասում ա հայկական առածը, ու ձեռքի
բաժակը բանձրացնելով կը շարունակէր, Աստւած էդ լաւ
գործ անողներին շատ պահի, ողջ պահի, յաջող պահի, ու-
րախ պահի, գւարթ պահի, երջանիկ պահի, հանգուցելոց
ողորմի, որտեղ էթան ժամանուն դէմք տեսնեն. ինչ որ ուզեն ի-
րանց սրտովն էլնի, ամէն: Ու օղիի գիլասը մինչև տակը կը
դարդէլու:

Ես հըմէնը միտս էկաւ Աշոտ Պատմագրեանիս թա-
փած զահմաթի վրէն, դէս ընկաւ, դէն ընկաւ, որտեղից որ-
տեղ վազաւ, 90 հատ աղջիկ տղայ ժողովաւ, մէ խումբ կազ-
մաւ, մէ երգել սովորացրաւ, մէ չափ տւաւ, մէ ղեկավարաւ
որ հըմենին զարմանքս տարաւ:





Են 19 Նոյեմբերի գիշերը որ էկամներս մտնիմ կոնցերտի,
դուսում կանգնած շարան-շարան օթօմօպիների ու կառքերի
պոչը չը տեսամ: Ներս մտամ, դարտակ աթոռ չը գլխամ: Աղ-
ջիկների ու տղերքի էդ մեծ դաստիճ որ եկաւ շարւաւ, մու-
զիկն էլ առաջը, ասամ՝ «ԷՇ, Տէր Աստւած, դուշմանի սրտով
չ'անես: Աշոտս որ ներս մտաւ, մէ քիչ րանկը թուած էր,
էլը աղօթամ, ասամ, «ԷՇ Աստւած, դու յաջողութուն տաս:»
Ամմա մէկ էլ որ սրահը ոտի կանգնաւ ու խումբը՝ «Իրանի
Աղդային մարշը» թնդացրաւ, էն էլ ինչպէս թնդացրաւ՝ փա-
ռաւոր, աննման, անսասելի: Աշոտիս գոյնը տեղն էկաւ, իմ
սիրտը պնդացաւ ու սաղ ներկաները հիացան:


Էլ մնացածը չ'եմ ասի, ո'վ եկեր ա՝ վայելեր ա, ով չի
եկէ քոռ փոշման ա, էսէնց բան թա հալա ոչ տեսեր իք ոչ
լսեր: Ի՞նչ կարգ, ի՞նչ կանոն, ի՞նչ ձէն, ի՞նչ շնորհք: Հըմէնքն
էլ հիացեր ին ու հասկացեր որ Աշոտս «երգի վարժապետ»
չի, երգահան ա, երաժշտագէտ ա, տաղանդ ա, մեր իրանի
հայերիս մէջ մէջ հատ ա:

Հա, ասեմ, Տիկին Ռոզից ասեմ, որ չսկսաւ, կլիլացը-
նել, ես շւարամ մնացիմ, ասամ՝ «ԷՇ Աստւած, զանարի ա,
բլբուլ ա, հազարան թուչունն ա, էս ինչ ա, էսպէս էլ սիրուն,
էսպէս էլ անուշ, էսպէս էլ քնքուշ՝ երգել կընի»: Իրեսին էլ
որ նայում իմ, իրա երգի հըմէն մէ ինօսքը կ'ասէս զարիֆ
դալամով սուրաթին գրւած էր ու մարդ կարդում էր՝ հաս-
կանում:

Շատ չ'եմ գովում, համը չ'երթայ, ամմա ափփերին,
շատ ապրեն մեր իրանահայ Պատմազրեան արւեստագէտ զոյ-
քը, ոչ թէ մինակ ես հազզ արամ, հըմէնքն էլ հազզ արան, ու
շատ շնորհակալ էլան որ մեզ եատ են արէ ու եկել: Բարով-
հազար բարի, թող ամեն տարի շնորհ բերեն, խօշ գան, խօշ
էթան, յաջողութունով:

Էն էրէսէքն էլ շատ ապրեն, շնորհքով սովորացնողի
աշակերտն էլ շնորհքով կընի, ընդոնք էլ իրանց բաժինուն
շատ յաջող ին ու շատ լաւ:

ՍՈՒՍՈՅ ԲԱԶԻ



ԱՍՏՈՒԱԾ ՔԵԶ ՀԵՏ

ԱԴԻԲ




Հէյ փուչ աշխարհ: Մէկը փող ունէր, մէկը գեղեց-
կութուն, մէկն ուսում. մէկը առողջութուն, մէկն անում ու-
նէր՝ դիբք, մէկը ջահելութուն . . . Հէյ, հէյ, հէյ, ոչ մէկին
չը խղացիր, ոչ մէկին չը թողար իրա ունեցածով հպարտա-
նար, զլոխը բանձր պահէր, հէյ անիրաւ չարխը ֆալաք: Հը-
մէն մէկի սիրածն ու ունեցածը իրա դժբախտութան, իրա
թշւառութան, իրա մահւան գործիքը դարձրար ու հէնց ըն-
դով ումբին վերջ տւար:

Հզարան տարիներ քո գործն էս էլաւ, ու մարդ-բանդէն
չը հասկացաւ իր թաքլիքը: Էդ էլ մէկ սրոն ա ընութան:

Սարի պէսդ տղայ էր, սաղ-սալամաթ, ո'վ տեսնում էր
էրնէկ էր տալիս, ո'վ տեսնում էր ընդուր առողջութանն էր
նախանձում, շատերը հարցնում ին՝ «Էս էլ եանի կը մեռի. . .»
Հէյ գիտի զիւնեայ, հէյ:

Թէ զաղիմ լինէր կ'ասին աչքով են տւել: Էդ որ չար
աչքը, էդ որ սև հողին էրկու օրւայ մէջ՝ էդ սարը գլտորաւ:
Ամմա հիմա էլ աչքի հաւատացող չը կալ, հըմէնն էլ աչքներն
բացել են ու շւարել քո գործերից, էյ ճակատագիր:

Էլ ո՞ւր ա էն մեր նազնին Ադիբը, ձէնը զցէր գլոխը
կլիլացնէր, օխողը մահլա ձէնը կերթար, ո'վ ընէր, ո'ւր ընէր,
ի՞նչ ընէր, ականջը կը զէր ու Ադիբի քաղցը երգի հետ կը



վերանար կ'երթար:

Ի՞նչ ասես ունէր մեր աննման Աղիքը՝ ուսում, խելք,
շնորհք- գրիչ: Ում ասես քոմաք էր, ուր երթար ծծաղ էր,
ի՞նչ ասես ձեռից կը գար, ու վերջն էլ համեստ, զրաւիչ, ըն-
կեր մէ տղայ:

Շատ-շատերը չը հասկացան, չը ճանաչացին, դազրը
չիմացան Աղիքի: Ու մէ օր վերջալուսին ցած զրաւ յոգնած
պլոխը, ցաւը չոքաւ բողազին, 48 ժամ կուան: Ի՞նչ կոիւ, ու
վերջը ցաւը խրաւ գետին, վերջացա՛ւ, ինչպէս որ հըմէն ինչ
ա վերջանալու:

Աստւած քեզ հետ, գնացիր, մի վախացիր, մենք հըմէնքս
էլ կը գանք, էս ա օրէնքն աշխարհի, դու ինքդ ֆիլսուֆ իր,
ինքդ հըմէնից լաւ իր հասկանում էս հըմէնը:

Աստւած քեզ հետ: Դու որ միշտ օգտակար էլար
հըմէնքին, բալքամ քո էդ մահովդ էլ օգտակար ըլնես շա-
տերին: Հըմէնքն էլ իմանան, հասկանան որ ոչնչի վրայ
յոյն չը պէտք ա դնեն էս աշխարհում, ոչ իրանց գեղեցկու-
թան, ոչ իրանց հարստութան, ոչ իրանց ուժի, ոչ էլ քեզ
պէս երկաթէ առողջութան: Մենակ օգտակար, բարի, ազնիւ
գործը կը մնայ էս աշխարհում ու բաս:

Դու շատ բան թուար քեզպէսդնեղին օգոսակար ըլնե-
լու էրնակ ուրիշներ: Էլ քո կէսդ թողնին:

Խաղաղութուն ու հանգիստ քեզ:

Քո ՍՈՒՍՈՒ ԲԱԶԻ

ՀԱՐՍԱՆԻՔ

Հին-հին ժամանակւայ, հըզար ու մէկ գիշերների,
հուրիների, փարիների, յաւերժահարմների, զարմանահրաշ
իշխանների թարիքներում ասում են՝ օխտը երկրից նւէրներ
բերան, օխտը օր՝ օխտը գիշեր քէֆ արան, ուրախացան թա-
գաւորի տղի հարմնիքին:

Ու էս տեսակի պատմութունները մեր պապերը պատ-
ման, մենք էլ լսացինք ու զարմացանք որ էդ հին այեամը
ի՞նչ աննման ա էլէ:

Հիմա. Էկէք տեսէք որ հինի տեղը նորն ա ծէէ, հա-
զար անգամ էլ գեղեցիկ, էլ գրաւիչ, էլ ղիւթական, էլ
զգլւիչ: Օխտն օրը՝ օխտանասուն, օխտն երկիրն էլաւ յիսուն՝
էն օրւանից որ մեր իկիդ Արքայազնը ճամբայ ընկաւ, երազ-
ների աշխարհն հասաւ, Եգիպտոսի օրհնած հողից ու նեղոսի
բերրի ափից, պայծառ, ժալուուն արեգակի զւարթ երկրից՝
մէկ աննման, չնաշխարհիկ արքայական ընտանիքի իշխա-
նուհի, իրան ընտրաւ նա կողակից:

Էլ ի՞նչ պատիւ, էլ ի՞նչ փառքեր, ի՞նչ տեսակի ու-
րախութիւն ու ցնծութուն, մենծ ու փոքր, ջահել ու ծեր,
հըմէնէքեան երջանկացան՝ խօշ խարսրով ամուսնութան,
Մսրա երկիրն հրճաւ համայն, էլ ցաւ չը կար, դուսսա չը

Մ Ե Բ
Ն Ի Ե Բ Ը

Խօսք չը կայ որ ամուսնութան էս երջանիկ օրերին հըմենքը ոգեսորւեր ին, հըմենքը՝ ուրախացեր: Հայերն էլ, երկրի անձնւէր քաղաքացիներ, իրանց անկեղծ զդացումը յայտնելու համար կայսերական գոյգին, իրանց համեստ հարսանեկան նւէրն ին պատրաստէ, որը մատուցան հարսնիքի օրերին:

Էդ մէ կլոր սեղան էր ոսկուց ու արծաթից, համ սիրուն, համ խմաստալից, համ արւեստով: Իրեսին զուս ցցւած քարտէզն էր Իրանից մընչև Եղիպտոս ու էն երջանիկ ճամբէն որ մեր Գահաժառանդը փաց իր թանգարին կողակցին բերելու: Ճակատին ն. Կ. Բ. Թագաժառանդի և ն. Կ. Ա. Թովզիէ Իշխանունու գոյնզգոյն նկարը՝ յախճապակու վրայ: Սեղանի չորս դովրը հայկական արւեստով քանդակւած ոսկի զարդարանք: Սեղանի մէշտեղը՝ տակին միացրած էր՝ եղիպտական ու իրանեան հին զինւորների արձաններով: Տակի պատւանդանն էլ ընկոյզի փայտից, դովրն էլ իրանեան ու եղիպտական զանազան խորհրդանշաններ:

Տեսնողը հիանում էր Ղարաբաղի Վարպետ Եփրեմ Օհանի էս գործով: Տեսքը սիրուն, ինքն արժէքով, միտքը շատ, աշխատանքը նորին ու ինսամւած, հըմէն ինչ սապրթ էր անում որ արքայափայել նւէր ա էդ, որն իր մէջ թամաս պարսկահայութան երախտիքն ու շնորհակալիքն ա արտա-

այտում իրանի կայսերական Մենծ Ընտանիքի Քաջարի թագաժառանգին ու նրա Արքայաշնորհ կողակցին:

Ճիշտ ա, որ շատ մարդիկ ին ընտրւած էդ գործը գլոխ բերելու, ամմա, ճշմարտութունն էլ պահանջում ա որ լաւ ու անձնւէր գործիչներին իր տեղին գնահատեն, պէտք աըստեղ մէ մնած «աքֆերին», մէ մնած «բարիքեալա», մէ սրտանց «շատ ապրէք» ասել Պ. Պ. Խօջամիրեանին ու լկոն թագէսսեանին, որ թամամ իրեք ամիս հըմէն բան մուկոն թագէսսեանին, որ թամամ իրեք ամիս հըմէն բան իրանց ժրաջանութամբ յաջողան ժամանակին հըմէն բան վերջացնել: Հըմէն յաղթանակ քաղցր ա, արդիւնքը լաւ, ամմա պէտք ա քաջ զինւորին, որ էդ յաղթանակն ա տարել տեղին ու արժէքին գնահատել:

Բարիքեալա, շատ ապրեն վարպետ Եփրեմն իր գործով ու Պ. Պ. Խօջամիրեանն ու լկոն թագէսսեանը իրանց անձնւիրութամբ որ մեր հըմէնքի իրեսը պարզան:

ՍՈՒՍՍՆ ԲԱԶԻ

Ճայ զից չե
ավագախա
աւագան



Մ Ե Ր
Ն Ի Ւ Բ Ը



Խօսք չը կայ որ ամուսնութան էս երջանիկ օրերին հըմենքը ոգերւեր ին, հըմենքը՝ ուրախացեր: Հայերն էլ, երկրի անձնւէր քաղաքացիներ, իրանց անկեղծ զգացումը յայտնելու համար կայսերական զոյգին, իրանց համեստ հարսանեկան նւէրն ին պատրաստէ, որը մատուցան հարսնիքի օրերին:

Էլ մէ կլոր սեղան էր ոսկուց ու արծաթից, համ սիրուն, համ իմաստալից, համ արւեստով: Իրեսին դուս ցցւածքարտէցն էր իրանից մինչև Եղիպտոս ու էն երջանիկ ճամբէն որ մեր Գահաժառանզը գնաց իր թանգագին կողակցին բերելու: Ճակատին Ն. Կ. Բ. Թաղաժառանզի և Ն. Կ. Մ. Ֆոփզիէ իշխանուհու գոյնզգոյն նկարը՝ յախճապակու վրայ: Սեղանի չորս դոփրը հայկական արւեստով քանդակւած ոսկի գարգարանք: Սեղանի մէշտեղը՝ տակին միացրած էր՝ եղիպտական ու իրանեան հին զինւորների արձաններով: Տակի պատւանդանն էլ ընկոյզի փայտից, դոփրն էլ իրանեան ու եղիպտական զանազան խորհրդանշաններ:

Տեսնողը հիանում էր Ղարաբաղի Վարպետ Եփրեմ Օհանի էս գործով: Տեսքը սիրուն, ինքն արժէքով, միտքը շատ, աշխատանքը նրբին ու խնամւած, հըմէն ինչ սապըթ էր անում որ արքայավայել նւէր ա էդ, որն իր մէջ թամամ պարսկահայութան երախտիքն ու շնորհակալիքն ա արտա-

յայտում իրանի կայսերական Մենծ Ընտանիքի Քաջարի թագաժառանգին ու նրա Արքայաշնորհ կողակցին:

Ճիշտ ա, որ շատ մարդիկ ին ընտրւած էդ գործը կլու բերելու, ամմա, ճշմարտութունն էլ պահանջում ա որ լաւ ու անձնւէր գործիչներին իր տեղին գնահատեն, պէտք ա ըստեղ մէ մննծ «աֆֆերին», մէ մննծ «բարիքեալլա», մէ սրտանց «շատ ապրէք» ասել Պ. Պ. Ա. Խօջամիրեանին ու Լևոն թաղէսոսեանին. որ թամամ իրեք ամիս հըմէն բան մոռացած, առաւօտից գիշեր դէս ընկան՝ դէս ընկան, մինչև որ իրանց ժրաջանութամբ յաջողան ժամանակին հըմէն բան վերջացնել: Հըմէն յաղթանակ քաղցը ա, արդիւնքը լաւ, ամմա պէտք ա քաջ զինւորին, որ էդ յաղթանակն ա տարել տեղին ու արժէքին գնահատել:

Բարիքեալլա, շատ ապրեն վարպետ Եփրեմն իր գործով ու Պ. Պ. Ա. Խօջամիրեանն ու Լևոն թաղէսոսեանը իրանց անձնւիրութամբ որ մեր հըմէնքի իրեսը պարզան:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անցած օր մէ շարք խանումներ որ թուալէթից, հագնուելուց ու զարդարւելուց բացի էլ ուրիշ բանով չ'են զբաղւում, պատերազմից ին խօսում:

— Երբ կը լինէր էս պատերազմը վերջանար:
— Ի՞նչի մարդն էնքան տգէտ պիտի էնի որ պատերազմի:

— Էսպէս որ ասում էն արդէն հաշտում էն:
Ու էսէնց խօսքեր:

Արդ անեմ խանումներիս խթմաթին որ լաւ կ'անեն մէ քիչ զուգւել - զարդարւելը չափաւորեն ու իրանց խելքի տոպարակը լեցնեն. մէ քիչ աւել կարդան, մէ քիչ աւել սովորեն, մէ քիչ աւել ծանդը ու լուրջ էնեն, իրանց կնկայ, մօր պարտականութունները լաւ հասկանան, որպէսզի ագեար տղամարդն էլ էշթէպա ա անում, իրանք իրանց շնորհքով, խելքով, մօհաբաթով էդ էշթէպան մէշտեղից տանեն, նա քի լաջ լաջբազի անեն, իրանց թաքլիքն էլ մոռանան ու մահանա բռնեն քի տղամարդս էս արաւ եա էն արաւ. ես էլ էսէնց արամ:

Իմ աղիտիս, պարզն ասեմ «Տղամարդը էն ա ինչ կնիկն ա ուզում» ընտրա էյպերն ու առաւելութունները կնկայ վարքից ու արարքից ա կախւած։ Մնա մինչև մէ անզամ ստուց սօհրաթ անենք։


Էկանք պատերազմին։ Արդ անեմ որ պատերազմը

բնութան մէ պահանջն ա, թա աշխարհն էլէր ա, պատերազմին էլէր ա։ էտի գոյութան կոփւն ա։ Գիշերը պատերազմում ա ցերեկւայ դէմ, լուսն էլ ընդրա դէմ։ Չորս եղանակներն էլ իրար դէմ։ Ծնւելու օրից ըսկսած մարդ արարածը կռւի մէջ ա, պատերազմի մէջ ա, իրա ուտեստի, իրա գործի, իրա ուսումնի, իրա գիւտերի, իրա գլուխ պահելու, իրա մըրցութունների, իրա շնորհքի, իրա հըմէն բանի խնդրում։ Մօնթաշ պատերազմը, ինչպէսդ ուրիշ բաներ, ձև ունի, տեսակ ունի, մինչև համենի թօփի, թուժանկին երբ մարդու շահը եա իրաւունքի պաշտպանութունը, եա գոյութան իրաւունքը պատի սահմաններից դուս ա գալի, մենծանում ա, ընդհանուրի շահն ու իրաւունքն ա էլնում, իրա երկրի, իրա հայրենիքի ինդիին ա ընում, իրա ժողովրդի պատիւն ա ընում, մարդկութան առաջադիմութան, մենծ գաղափարների պաշտպանութունն ա ընում, ու էս հըմէնի դիմացը զօռ ու անիրաւունուն ա տեսնում էն ժամանակ պատերազմը էս րիխտն ա անում որ էտօր վճռւտ ունի աշխարհում։

Իմ աղիտին, մեր խանումները պէտք ա էս հըմէնը լաւ հասկանան, որպէսզի իրանց էրէխէքին քաջութուն, հայրենասիրութուն, անձնւիրութուն սովորացնեն, որպէսզի ընդրանց հոգիներն ու մտքերը մենծ գաղափարների կապեն, մահն արհամարեն ու իրանց էդ ուժով պատերազմի վտանգին դէմ կայնեն, նա քի առաւօտ թա գիշեր իրանց արդ ու զարդով զբագւեն ու ինչպէսդ որ հարեանի կնկան եա աղջկան էն բանբասում պատերազմի մասին էտէնց խօսալով իրանց զարգացած ու խելացի դալամ տան։

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ

Տ Ե Ր Ա



ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

ՏՕՆԻ

Անցած հինգշաբթի Համբարձում էր, և հըմէնքը՝ կնիկ,
էրէխա հաւաքւեր ին ու եալլա Վանագի ջրի գլոխը, դարւա-
իղ դուսի բաղը՝ գնացեր ին քէֆի:

Օղորթն ասած Համբարձումի, Վարդավառի քէֆերը
լաւ քէֆեր են, ամմա ա' փսոս որ երբեմն մէ քանիսը համը-
հոտը հանում են ու ամեն ինչ խարաբ անում, իրանց ճիղ ու
դատով ու կուսվի: Ես անդամ էլ նոյնն էր:

Ես միաս ա գալիս՝ երբ աղջիկ իմ, ընկերունիներով
կէթինք օխորը ձաղիկ կը քաղինք, օխոր աղբուրից
ջուր կը զերցինք, Զան գիւլումի գասկանը կը դուզացնինք՝
Համբարձման օրը շունչներս կտրած կ'սպասինք, որ տես-
նինք մեր նիստը ինչ կընէր, մեր բաղդը ինչ կ'ասէր, ու
սաղ տարին մեզ հըմար դուս էկած շէկը վրէն էնքան կը
մտածինք, որ վերջը օղօրթ - օղօրթի հէնց էլէնց կէնէր:

Հիմա ճիշդ ա' աշխարհը փոխւեր ա, միտքերը փոխւ-
ւեր են, և աղջիկները էղէնց բաների չ'են հաւատում, պէտք
էլ չ'ունեն որ հաւատան: Են վաղթը մեր հէրն ու մէրը մեզ
չ'ին թողնի մէ տղի իրես տեսնինք՝ ուր մնաց հետը խօսինք,
մեր ամբողջ օմիզը Զան գիւլումի վրէն էր: Հիմա աղջիկ-
տղայ ինչքան որ սիրտներն ուզի իրար տեսնում են, խօսում
են, պտտում են, և Զան գիւլումի մօհթաջ չ'են:

Ամմա, ինչ կ'ուզէք ասէք, ես հիմա և խօշ էմ Զան
գիւլումով: Միտս ա գալիս, իմ բաղդը հէնց Համբարձու-



մին բացւաւ: Օղորմած հոգու անունն էլ Համբարձում էր, դուք հո ինձանից լաւ գիտէ՞ք, ձեզի ամենիդ հետ էլ բարեկամ էր: 17 տարեկան իմ, Զան գիւլումի ամասի մէջ գցածս բանլիքին էս խօսքերը դուս էկաւ:

Բաղդդ էս ա բացւեր ա,
Զան, գիւլում ջան, ջան.

Իգիդ տղէն կայներ ա,
Զան, ծաղիկ ջան, ջան,

Երկար - բարակ չի քաշի,
Զան, գիւլում ջան, ջան.

Սիրտ ու հոգի մի մաշի
Զան, ծաղիկ ջան, ջան:


Վա՛յ, վա՛յ տեսնիք աղջիկները ի՞նչ դրան գլխիս:

Տամնըօխտը օր չը քաշաւ Համբարձումիս հետ նշանաւամ:

— Է՞ն, ինչ որ ա, ըստոնք անցած են: Խօսք չը կայ, հիմա շատ աւելի խելացի էն մարդիկ քան առաջ: Էս էլ որ պատմամ իմ անցածս միտս էկաւ: Մաղսուլս էլ ուրիշ բան չէր մազեար մէ խրատ մեր պարոններին: Քէփ էք անում՝ քէփ արէք, խօշ ելէք, ամմա խելացի քէփ արէք, կոփւները ոչ քէփ սարքողներիդ, ոչ էլ քէփ անողներիդ պատիւ կը բերի:

Հա՛, օղօրթ, խսկականը մոռացամ, քէփի օր՝ Համբարձման օրն ա ոչ թէ Մեսելոցի: Էս մէկը միտներդ պահէք մինչև մէ անգամ էլ էս մասին ձեզ հետ խօսամ:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ




ՇՆՈՐՀԱԿՈՐ


ԶԵԶ ՆՈՐ ՏԱՐԻ

1938-ն էլ գնաց էն տարիների կողին, որ երազի պէս էնք յիշում: 1938-ն մէ էրազ դարձաւ ու թուաւ: Ուրախութուն ու տվյալութուն յաջողութուն ու անյաջողութուն հրմէնն էլ էդ տարւայ զուճացում մնացին ու հինի հետ գնացին: Բա՛րի ճանապարհ: Էս մեր աշխարհում հրմէն ինչ էլ հինց էդէնց կը գայ ու կ'երթայ: Էրնէ՛կ, հազար էրնէ՛կ էն մարդին որ ոչ դժբախտութան առաջ յուսահատւաւ, ոչ էլ բարերախտութունից իրան կորցրաւ: Էս ա խսկական պայմանն աշխարհի: Էն ա «Յօրովա»-ի ճակատին դրեր եմ իմամ Ալու մենծ խօսքերը՝ «Հրմէն կենդանի մարդի հրմար մահ կայ ու հրմէն ինչի վերջ»: Միլիոններ ձեզ ու ինձ պէսդ էկան ու գնացին, քաղաքներ շինւան ու քանդւան, ծովեր ցամաքան ու սարերը ջուր կտրան, դարերն էկան ու գնացին, ու էս արեն ու լուսինը հրմէնի բէխին ծծաղացին: Էս ա օրէնքն աշխարհին:

Նորն ա գալիս հինն ա էթում, հինն ա մեռնումնորը ծնւում, աշխարհն ու իրա գործերը չարխը ֆալաքի պէս պառուտ ա գալի, ու հրմէն մէ պառուտին մէ բան տանում, մէ բան բերում: Հին երգն ա նոր ձեերով թաղադան երգում, անցեան ու նոր տեսակով մէշտեղ բերում:

Էս բոլորի մէջ մարդը, երբեմն իրան կորցնում ա, ու էդ օրէնքը մոռանում: Էդ օրը, իմ աղիղիս, մարդի հրմէնից բաղբախտ օրն ա, վա՛յ ընդուր որ մօշթարէ ա ընում, կարծում ա քի՞ աշխարհը մէ օր իրան ժպտաց. գործը յաջողաւ. ինքը բանձրցաւ. էլ հրմէն ինչ պըրծաւ ու իր






Խաւարում էր չխօսացիմ, Համբարձում էր չը խօսացիմ, Վարդավառ էր չը խօսացիմ, մէ էրկու անդամ էշարա արամ մնուելոցների քէֆերին, կարծամ բասս ա, մի ասա Աստւածածինն էլ վրէն աւելացաւ:

Հրմէն տեղ անկարգութուն, հըմէն տեղ կոխւ, խայտառակութուն: Դուք ընէք ձեր էն Աստւածը, ասէք, էդ պատիւ կը բերի: Ակեար ժողովրդի մէջ անկարգ մարդիկ կան—խօսք չը կայ հըմէն տեղ կը՝նեն—բա էդ զործերը ղեկավարողներն ու վարիչները էդ հըմէնի առաջը հէ՞ր չ'են առնում:

Էդ քան զժւար ա մակեար որ Խաւարում զիշերը ողբի ժամանակ շուկուղ չ'անեն, Համբարձումին ու Վարդավառին չը ջարդեն, մնուելոցին չը հարբեն, Աստւածածինն մէ ճութ խաղողի հըմար իրար զոյխ չը կոտրեն եկեղեցու մէջ:

Ես Տէր Թէ՛սուիկը բանած մինչև էս օրւայ հըմէնից առաջին դպրոցի մէջ չ'եմ տեսէ որ վարժապետն ասի «Ես իմ դասը տալիս եմ ու էթում, էրէխնէքը ինչ կ'ուղեն թող անեն», Էդ դասը տալուց առաջ, կարգն ա ու կանոնն ա հարկաւոր, ակեար չէ տւած դասը մէ շայի չ'արժի:

Հայ կաթոլիկների եկեղեցում էլ տեսեր էմ խաղող էն օրհնէ, շնորհալի տէրտէրը, ինքը կանգներ ա, իրա ձեռքով հաւատացեաներին մէ-մէ ճութ տւեր ա ու էն մէ կողմից դուս էն էկէ, զնացէ:



Ամմա, արի ու տես, որ մեզ մօտ ի՞նչ խաբար ին զրէ, ի՞նչ բասաթ ին սարքէ, ու եկեղեցու մէջ մէ ճութ խաղողի հըմար կոտորւում ին մինչև աժանի գալը: Ամօթ, շատ ամօթ:

Էդ բոլոր ղալմաղալը, էդ անպարտաճանաչութունը, էդ կոփուները, էդ վարքը, էդ վերաբերմունքը, էդ մտածելակերպն ու արարքները իսկի պատիւ չ'են բերի մեզ:

Առածը լաւ ա ասէ. էլը կրկնում եմ «Հասկացողին մէկ, չը հասկացողին հազար»: Ակեար ասել ա, էջալաթան հէնց էս էլ բասս ա:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ՆՈՐ
ՏԱՐԻ

Մէտարի էլ գլորւաւ ձեր կնանքից ու իմ կեանքից:
563 օրեր գնացին ննջելու ի գոգն Աբրահամի: Լաւ - վատ,
խօշ - նախօշ անցաւ ու ծծաղաց մարդկանց քթին: Հիմա
նորն եկաւ: Ասում են դրուստ խօսողի գլխարկը ծակ կ'էլնի:
էս տարին էլ էն տարւայ քոռ ախրերն ա: Բիխող ոչ ոգեսոր-
ւէք, ոչ յուսահատւէք: Համ լաւ օրեր ունի, համ վատ: Համ
ծծաղ ունի. համ արցունք: Համ յաջողութուն ունի համ, դր-
ւարութուն: Ագեար իմ խորհուրդն էք ուզում դուք էնպէս
քաջ էլէք՝ որ տիսուր օրերին ծծաղաք, ուրախ օրերին արդէն
խօշ կ'էլնէք:

Քօնա սովորութուն ա, որ Նոր - Տարւայ գլխին նւէր-
ներ էն տալիս, նւէր ստանում: Արդ էլնի. ձեր սիրելիներն
էլ քիչ եա շատ, մինծ եա պստիկ, նւէր տւած կըլնեն ձեզ:
Ինչ որ էլ էլնի դաղը իմացէք, չուն քի էդ նւէրի արժէքը
չի, իսկական իմաստը զգացումն ա: Մեր սիրելի համերկրա-
ցիները մէ սիրուն խօսք ունեն, «Թռֆէյը դարւիշ բարկը
սարդիստ»՝ Դարւիշի նւէրը մի կանանչ տերև ա:

«Բորոխ»ն էլ ձեզ վատ էր սովորացրել հըմէն տարի,
ձեզանից շատերի անումով, առանձին - առանձին նւէրներ էր
բերում: Հիմա ագեար չը բերի աչքներդ ճանապարհին կը

մնայ, սիրտներոտ կարօտ: Ամմա մի մուացէք հըմէն ինչ՝ մէ
վաղթ ունի ու մէ տեսակ: Հիմա էլ հնարաւոր չի հըմէն մէ-
կիդ առանձին ուազի անել, էս ա դաստա - դաստա նւէրներ
եմ բերել, դուք հօ ձեզ լաւ էք ճանաչում, անկեղծ էլէք,
տեսէք որ դաստին էք պատկանում վերցէք ձեր նւէրն ու
խօշ էլէք:

Էս էլ ասեմ որ մէ մինծ մարդ, դադիմ, մէ շատ իմաս-
տուն բան ա ասել «Խօսքերը կը թռնեն, ամմա գրւածները
կը մնան»: Էնպէսդ որ իմ նւէրները մնացական էն, երբ ու-
զէք կ'օգտւէք ընտրանցից:

Բարերարներին՝ մաղթեմ Նոր - Տարին
Տայ առողջութիւն, գործեր թանկապին:

Մեր Տիկիններին՝ որբերի պաշտպան՝
Թող Աստւած լինի իրենց օգնական:

Անազնիւ մարդին, խարերայ ստոր՝
Անվերջ թող մնայ երեսը բոսոր:

Զար հոգիներին՝ կծծի ու չըկամ.
Կեանք, փող ամեն ինչ թող լինի հարամ:

Իսկ մանկիկներին՝ անմեղ նորածին,
Երջանիկ մի կեանք, գարուն ծաղկածին:

Երիտասարդաց խելօք, պիտանի՝
Գործ, յաջողութիւն, դիրքեր անւանի:

Ամուսիններին, անհաշտ, կուարար,
Համերաշխութեան ուղիղ ճանապարհ

Սիրահարներին՝ մէկ մէկի կարօտ,
Բաղզը թող ժպտայ, համնեն իրար մօտ:
Մեր աղջիկներին՝ համեստ, ամօթխած,
Լաւ ամուսիններ շնորհէ Աստւած:
Բամբասողներին՝ չարամիտ ու նենդ,
Այսօր կամ վաղը բոլորին թաղենք:
Ամուսիններին՝ խմող, հարբեցող.
Նորաստեղծ պատւաստ՝ այդ ցաւը բուժող:
Աև հոգիներին՝ մի ուղի շիտակ,
Կամ իրենք ընկնեն՝ հէնց իրենց ծուղակ:
Քրկւելու համար մարդկանցից համբակ,
Կոպեռից գնւած մի կապոց բամբակ:
Ստախօսներին՝ թունաւոր իմեր,
Խղճի ծանր խայթ, չը քննեն զիշեր:
Զեղծարարներին՝ այսպէս թէ այնպէս.
Իրենց արժանի պատիժներ պէս - պէս:
Գիր - տառի պաշտպան մարդուն գիտակից,
Գրպանը լինի սրտին աջակից:
Բաժանորդներին՝ մեր պարտաճանաչ,
Յաջողութիւններ, մի կեանք հիասքանչ:
Փող ուտողներին՝ որք ձևանան խուլ,
Թող չը մոռանան բաղդն է խարխուլ:
Պատկառանքից զուրկ, մարդկանց անամօթ
Խղճի մի ցնցում, զգացում, ամօթ:

Մեր հարուստներին՝ հոգի խանդավառ,
Ազգօգուտ գործերն՝ զարկ տան՝ պահեն վառ:
Տառապողներին հիւանդ ու տկար,
Շուտ ապաքինում, լաւ օրեր հազար:
Մեր գործիչներին՝ մերթ պոռոտախօս,
Բերնի մի փականք՝ որ մնան անխօս:
Գոռողն, մեծամյան և ամբարտաւանն՝
Թող չը մոռնան գերի են մահւան:
Մեր պարոններին՝ զումարի գերի՝
Թող լաւ գիտենան պատիւ չի բերի:
Բանաստեղծներին՝ ժրածան, աշխոյժ,
Նոր խանդ ու աւիւն, նոր հոգի, նոր ուժ:
«Ապրում ենք էլի», ասող յիմարին:
Աչքեր որ տեսնէ աստղ, արև, լուսին:
Ամբողջ աշխարհին՝ սէր խաղաղութիւն,
Վերջ պատերազմի, համերաշխութիւն:
Իրանին սիրուն, իրանին պայծառ,
Փառապանծ մի կեանք՝ դարեր բիւր հազար:
Մեր ժողովրդին՝ մարդիկ խելացի,
Որ կթած կաթին չը տան աքացի:
Խնձի՝ վճարող բաժանորդ աղնիւ,
Խսկ ձեզ՝ երկար կեանք, դիրք, շահ ու պատիւ:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ԻՄ ԱՅՀԲԱԹՆԵՐԻՑ



Մէ էրկու անգամ որ ինձ չը տեսաք, ասաք Սուսան
Բաղին կորաւ, ազատւանք—թշնամիներդ կորչի ես ձեր բա-
րեկամն եմ:

Ամմա բանը նրանումն ա, որ մարդիկ էս օր իրանց
բարեկամն ու թշնամին չեն ջոկում իրարից:

Ով որ իրեսներին ծծաղում ա, եյպերը ծածկում ա,
չ'ունեցած առաւելութիւններն ա գովում, չ'եղածը էղած ա.
ասում, էղածը չ'եղածի տեղ ա դնում, էն լաւ բարեկամ ա,
էն խսկական հասկացող ա, որովհետև տգեղին սիրուն ա ա-
սում, տգետին գիտուն:

Մի սխալւէք, ճիշդ բարեկամն էն ա որ սրտաբազ՝ լա-
ւին լաւ, վատին վատ ա ասում: Ես միշտ էլ ձեր լաւն եմ
ուղում, ինչ որ լաւ բան էք անում ես էլ ձեզ հետ կամ:

Մասալան, ձեզնից շատերը նոր ձեի շոր, նոր ձեի մա-
ըադի կ'էլնի, ու ոչ աչքը ուրիշի ունեցածի վրէն կը պահի,
ոչ էլ լեզուն եա միտք չարութունով մաշդուլ կ'անի:

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ

ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԱ
ՄԵՐ ԶԱՀԻԼՆԵՐԻՆ

Անցածները մէ հայ թերթ իմ կարդում անումը «Պալքանեան Մամուլ», մէջը կարապետեան անումով մէկը գրեր էր Էստեղի հայ տղերքի ու աղջկերքի դարդերից, տեսամ որ ցաւը մէկ ա, հըմէն տեղ էլ նոյն հիւանդութունն արոնէ էս մեր երիտասարդներին: Մէ քիչ ֆիքք արամ ու ինձի էնէնց էկաւ որ քաղաքակրթութան բերած շատ բարիքների մէջ երբեմն էլ շատ չարիքներ կան, մարդիկ պէտք ախելացի էնէն, ինչպէսդ որ հըմէնից լաւ խնձորի մէջ որդնածներ էլ ճարւում էն ու խնձորավաճառին բաղնամ անում, ինչպէսդ որ ցորենի մէջ մի քանի դառնիճ ա ճարւում ու սաղ ալուրը դառնացնում, էղէնց էլ էսօրւայ մեր քաղաքակրթութան բուրք ու բարիքի միջից բազի բաներ ա դուս գալիս որ չարիք ա դառնում: Մնում ա որ մարդ արարածը խելքը գլոխը ժողովի, լաւը վատից ջոկի:

Երկէն չ'անեմ, խօսքս էս մեր ջահել աղջիկներին ու տղերքին ա վերաբերում, ագեար քաղաքակրթութունը հըմենիս հըմար ազատութուն բերաւ, նին, փիս սովորութունները վերացաւ՝ որ աղջիկը տունը կը նստէր, տղի իրես չ'էր տեսնի, գործի չ'էր էթայ, շատ էլ ուսում չ'էր առնի, իր չ' տեսած, չը ճանաչած մարդի հետ հօրն ու մօր կամքով կը պսակւէր, ու ըտէնց հազար ու մէ բաներ: Փառք Աստծու,

էս օր քաղաքակրթութունը ըտոնք հըմէնն էլ մէջից տարաւ, համ դուս կը գան, համ լաւ կը հագնւեն, համ իրար հետ մարդավարի կը տեսնւեն, համ գործի կ'էթան, համ տղայաղջիկ իրար կը ճանաչեն ու ետոյ կը պսակւեն, հըզար էսէնց խօշ ու լաւ բաներ:

Ամմա, արի տես որ քաղաքակրթութուն ծուռ հասկացողներ շատ ճարւան, մախսուսան մ'եր հայ երիտասարդների մէջ՝ որ կարծան քի մինակ պէտք ա շիկ անել. ման գալ քաֆէ էթալ, ուտել, խմել, զուարճանալ ու իրանից էլ բազի էլնել: Սպասել որ մէ հարուստ մարդ ճարւի, փող ունենայ, տուն ունենայ, ամառանոցի պաղ ունենայ, օթօ ունենայ, էլ չ'եմ իմանում ինչ ունենա, որ հետը պսակւեն: Տղէն էլ իր հերթին էղէնց մէջ աղջիկ ա ուզում, ազեար չէ քի ամեն մէկը իրա ֆիքրին ապրում ա ու խսկի էլ չի մտածում պըսակւի: Զէ՛, չէ՛, չէ՛, շատ էք ըշտպա արէ՛: Ճիշտ ա իմ տարիքը շատ ա, ամմա, վալլա ես ձեզնից շատ լաւ եմ հասկացէ քաղաքակրթութունը. Սպեար դուք խելօք, խելացի աղջիկ էք, շատ փողի ետևից ընկնելու ու հանգիստ ապրուստ երազելու տեղ, պէտք ա հէնց էնքան էլնի որ ձեր գեօրա մէ տղի հաւնէք, արհեստաւոր էլնի, գործաւոր էլնի, աշխատելու սէր ունենայ, զէյրաթ ունենայ, թէկուզ էլ ոչ փող ունենայ, ոչ տուն, ամմա շնորհք ու խելք ունենայ, ընտուր հետ սիրտ-սրտի կապւէք, պսակւէք, ձեռք-ձեռքի տաք աշխատէք, իրար թէ ու թիկունք էլնէք, հըմէնից լաւն ա, օգտակարն ա թէ՛ ձեզ, թէ՛ ժողովրդի, թէ՛ երկրի և թէ՛ մարդկութան հըմար, ազեար չէ փօզ տաք, էֆաղա անէք, նազ անէք, վէլլան մնաք, վերջը շատ կ'ափսոսաք, ուշ կէլնի քի ոչինչ, դուք էլ շատերի բաղբախտանալու, ձեզ պէսդ սխալ մտածեյու, լաւը վատից, խելացին անպէտքից, օգտակարը վնասակարից չը ճոկելու հիւանդութան պատճառ կը լնէք,




ձեր կեանքն էլ ոչ ձեզ, ոչ ձեր ժողովրդի, ոչ ձեր երկրի ու
ոչ էլ մարդկութան ֆայդա կը տայ: Լուրջ կարդացէք, լաւ
մրտածէք ու շուտ որոշէք ձեր անելիքը, հըմէն սխալ կա
րելի առղջել, հըմէն ծուռ գնացած ճանապարհ կարելի
ա փոխել, հըմէն չը հասկացւած բան կարելի ա բացատրել
Աստւած ձեզ հետ, ես իմ պարտքս կատարամ, շատ ուրիշ
բաներ կար ասելու սարֆընազար արամ, մեր պարսիկ եղա
բայրներն ասում էն «Խելացի մարդուն «Ֆ» ասես, «Ֆարա
զադ» կը հասկանայ: Դէ՛հ, հիմա դուք դիտէք:

ՍՈՒՍՍՆ ԲՍ.ԶԻ



ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹՈՒՆ ՈՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՈՒՆ



Դուսը ցուրտ ու ձմեռ, ձուն ու անձրև, կուչ եմ էկէ
վառարանի կրակի առաջ ու ֆիքը եմ անում...

Կրակը, պէծին ա տալիս, մէկ-մէկ միտս էն գալի ան-
ցած-գնացած օրերը, լաւն ու վատը, խէյրն ու շառը, յաջողն
ու անյաջողը:

— Հէյ, հէյ, աշխարհում ամէն բան էսպէս ա, դառն
ու քաղցրը իրար հետ խնամութուն ունեն, կապւած էն իրա-
րու: Միտս ա գալիս ի՞նչքան դահմաթ, ի՞նչքան նեղութուն
ասես քաշամ էս մեր «Յորոխ»ի հըմար ի՞նչքան բիրնսափ
մարդիկ թերթ ուղացին, կարդացին ու փողը չը տւան հիշի,
վրիցն էլ ջուրը խման... Աստւած վերջները բարի անի...
Ազեար մերք բաժնեգին առած ընինք ու թերթը տւած չը-
նինք, ձէները երկինք կ'երթար, հարա՞յ կը ճւին, հաւա՞ր կը
կանչին, օգնութուն կ'ուզին... Ո՛չինչ, իմ սիրտը մենծ ա,
Քրիստոսն ասաւ՝ «Երնէկ հոգով հարուստներին»: Էղ մար-
դիկը ինձ մօտ ամօթով էն, ու ես իրանց մօտ հպարտ, ու
ազեար իրանց խելքն ու խիղճը, իրանց էղ գործը իրաւացի-
ներն ասում են՝ «Հար գօլի զաղի, սարը խօզ զաղի»: Թող ու-
տեն... ամմա չը մոռանան որ մինակ ուտելը չի, մարսել էլ
պէտք ա: Աշխարհում մէ օրէնք կայ մարդկանց ճակատա-





զըրի մէջ որ չը պէտք ա մոռանան: Կ'ուզեն հաւատացեալ էլնեն կ'ուզեն անհաւատ, պէտք ա իմանան որ «ինչ որ ցանեն, ուշ եա շուտ պէտք ա հնձեն»: Էսօր ես բարիք էմ անում, խեղճի էմ օգնում, հիւանդի էմ համում, որբ էմ ինամում, նախախնամութան անտեսանելի ձեռն էլ մէ օր ինձ ա հասնում՝ երբ ոչ մէ ումիդ չ'ունեմ: Հակառակը, փիսութուն էմ անում, ուրիշի իրաւունքը ոտի տակ էմ տալի, ազիաթ էմ անում, նեղացնում էմ ու ինքս ինձն ծծաղում որ «ես խելօք մարդ եմ, մարդկանց հէրը հանում էմ, ոչ ոք չի հասկանում, ոչ մէ օրէնք իմ եախէս չի բռնում, քէֆիս ուզածն էմ անում, չուն քի ճամբէքն էմ իմանում» վայ ինձի, հրզար անգամ վայ, որովհետեւ մէ օր էդ ճամբէս կորցնելու էմ ու կիր էմ ընկնելու, ինձնից ճարպիկին զոհ էմ էթալու, օրէնքի առաջ չոքմշելու էմ, ու աղի-աղի արցունք էմ թափելու: Ես դասը թող ես տամ ձեղ ձեր կեանքում, թէ՛ լաւ անէք ինձ կը յիշէք, թէ՛ վատ անէք՝ էլի կը յիշէք. . .

Ֆիքը էմ անում, ու կրակին նայում, չէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, ապերախտութունը շատ վատ բան ա. . . Ես ցուրտ ձմեռին քուչից անցած ժամանակ, դողացող, լացող աղքատին էրկու շահի որ տալիս էք՝ տասը տեսակ օրէնանք ա կարդում ձեր գլւխին, բա ինչ ապերախտ պէտք ա էլնեն ընդոնք որոնց հրմար խելքով, խիղճով մարդիկ հրզար տեսակ քօմակ էն անում, եա պատիւ էն տալիս, ու վերջը մէ չոր շնորհակալութուն անգամ չ'էն ասում ոչինչ, թալաբքար էլ էն ընում, որ պարտաւորին իրանց հրմար էդ հրմենը անին, . .

Օրինակը էնքան շատ կայ, որ մարդ չի իմանում որտեղից սկսի որդէ վրեջացնի: Միտս ա զալիս քանի-քանիսը պսակւան՝ գովանք իրանց, քանի-քանիսը շնորհք եա արւեստ ՚նշանյ՝ տւան



բանձրացրանք իրանց, քանի-քանիսի՝ էս եա էն գործը արժէքաւորանք, ու էդ հըմէնից հազիւ մէկը եա էրկուսը բերանները բացան մէ շնորհակալութուն յայտնան, մնացածները՝ իրանք եա իրանց շրջապատը մէ բան էլ թալաբքար էլանքի՝ «Պէտք ա որեն, իրանց պարտականութունն ա, պատիւ ա իրանց թերթի մէջ մեր անունը տան, մեր գործը յիշեն, մեր մասին խօսան:»


Ես ա աշխարհը որ կայ, էդ ա որ մէ օր էսպէս ցուրտ ա անում, անձրև ու ձուն ա գալիս, որ բազի մարդկանց կեղտերը մաքրի ու լւայ, մէ օր էլ ամառ ու կրակ-շոգ ա անում՝ օր իրանց քաշած նամը դուս տան, մէ քիչ չորանան:

Իմ խօսքս էն ա որ մարդ արարածը պիտի իր մարդկութունն ապացուցելու հըմար պարտաճանաչ էնի, երախտագէտ էնի՝ իրա կառավարութունին, իրա երկրին, իրա դաստիարակներին, իրա ծնողներին, իրա շրջապատին ու ինքն էլ փոխանակ չար ու անիրաւ ճամբէքը բռնելու՝ պէտք ա ազնիւ ու պատւաւոր կերպով օգտակար ընի ամենքին: Մէ դադիմ խօսք էլ ասեմ ու պըրծամ. «Ինչ որ չ'ես ուզում քեզ անեն, ուրիշներին մի արա»:

ՍՈՒՍՍՆ ԲԱԶԻ



ԾՈՒՐԻ ՄԻ ԱՏԱՌԵՔ



Աշխարհը փոխւել ա, էն էլ էնպէս, որ ոչ ոմ ոչինչ չի
հասկանում: Իմ աղիղէն էն ա որ եթէ էսպէս շարունակի՝
բողկերը, գետնախնձորները գետնի տակից դուս կը զան ու
կոթերը գետնի տակ կը մտնեն:

Ճիշտ ա, հիմա դուք իմ էս խելքի վրէն ծծագում էք՝
ամմա: Էս ձեզի բացատրեմ, դուք էլ իմ աղիտին կ'էլնէք:

Մարդի մէկը շատ նեղն էր: 4—5 հոգի բարեսիրտներ
հաւաքւան էդ մարդի հըմար մէ դրամագլուխ դուղացրան,
գործի կպաւ, գործն է յաջողաւ, հըմէնի փողերը կամաց կա-
մաց յետ տւաւ, մնաց մէ հոգունը, մէ էրկու հարուր թուման:
Էկաւ էս մարդի մօտ ասաւ արի դու մէ հինգ հարուր էլ
տուր, գործս մննծացնեմ. ապահով էլի փողդ մէ անդամից
յետ կը տամ: Է՞ն, մտածաւ մարդը, ես քի լաւութուն էմ արէ,
թող կարգին էնի, համաւ 300-ն էլ տւաւ:

Ժամանակն անշաւ, գործերը յաջողաւ, տարիները թուան:
Մէ օր էլ մեր բարեկամը տուն տեղը հաւաքաւ ուղաց էթա
ուրիշ քաղաք: Պահանջատէրն էդ օր իմացաւ, զրկաւ էդ
մարդու մօտ քի՝ «Բարեկամ հըմէնի պահանջը տւար, իմը
մնաց, ես քի քեզի հըմէնից շատ օգնամ, բեր իմ փողն էլ
տուր, յետոյ գնայ»: Չունեմ, կը տամ, կը զրկեմ, զէս-զէն
խօսքից-խօսք ու վերջը պարտատէրը կպաւ պահանջատիրոջ
քեալին:



— Քեզնից վատ մարդ չը տեսամ էս աշխարհում, դու
իմ դուշմանն ես, իմ թշնամին: Դու ինչու ժամանակին
մյուսների պէս փողդ յետ չը պահանջար, ինձի չը նեղացրար,
ինչի նորից նոր փող տւար: Դու ակեար պինդ բռնած էլնիր,
էսօր ես քո փողդ էլ վճարած կէլնիմ: Դու ամենափիս մարդն
ես որ կաս . . .

Խօր, էս պատմութունը լսելուց յետոյ ինչ կ'ասէք: Էս
էլ քեզ լաւութիւն անելու ու վարձատրելու ձև: Տեսնում էք,
հըմէն ինչ տակն ու վրայ ա էլէ, լաւութունը ինքը յանցանք
ա զործէ:

Մէ օր ականջովս լսամ մէ բարերար մարդի ուշունց ին
տալի քի հէր էս էդ քաղցած էրէխէքին փող տալի, դրանք
ձրիակերութան կը վարժւեն:

Ֆրանսացի մէ մենծ գրող Գիւյ դը Մօպասան, մէ սի-
րուն թարիք էր զրեր, էն էլ ստուր քօս ախպէրը:

«Մարդի մէկը մէ կնիկ առաւ: Գլխովը պտուտ էր գալիս:
Ինչ օր կնկայ սիրան ուղում էր անում էր, առնում էր: Խօս-
քին խօսք չ'էր բերում: Սիրտին մէ բառով չ'էր կպնում:
Կնկան սուլք էր շինէ, տաօր մատը մոմ էր արէ, սիրտը ծա-
ռայ, հոգին սարուկ ու զովրը ման էր գալիս:

«Մէ օր էլ զայ տուն ինչ տեսնի: Կնիկը վախեր ա: Մէ
հատ նամակ ա թողէ: Բացի ու կարդա, ու ի՞նչ կարդա: Քի
քեզնից անպէտք, անպիտան մարդ չը կայ: Մէ օր տղամար-
դութունդ չը տեսամ, մէ օր չը ճւացիր իմ զլխին,
մէ օր չը կուար ինձ, չը հայհոյար, ձեռդ չը բանձրացը-
րար, չը ծեծար, ոտիդ տակ չ'առար ինձ: Քեզ էլ տղամարդ
կասեն:

«Դէ՞ն, արի ու կնկայ զադը իմացիր:

«Ու ժամանակն անցաւ, ու էս մարդը մէ օր հանդիպաւ
իր կնկան, տեսաւ թէ ինչպէս մէ կեղտոտ՝ հարբածի հետ






էր ապրում, ու օրական իրէք անգամ ծեծ ուտում:

Էս տեսակ բաներից յետոյ ձուկն էլ դուս կը գայ ջուրից
կը վազի, փիղն էլ թե կ'առնի կը թռնի, ջուրն էլ բէնզինի
պէս կրակ կը բռնի կը վառւի:

Էլը մաղսուս սխալ չը հասկանաք, էս բոլորը որ ա-
սում էմ ու բացատրում, էն ա, որ մարդիկ իրանք շատ ան-
գամ ծուռ են մտածում, ծուռ հասկանում, ու էդ ա որ հըմէ-
նից լաւ գործը վատ տեսք ա առնում, ու հըմէնից փիս գոր-
ծը գեղեցիկ ու սիրուն երևում:

Էս դարը, զարգանալու, սովորելու դար ա: Մէ քիչ ձեր
շորից կտրէք, մէ քիչ ձեր փորից, մէ քիչ էլ ձեր քէփերից
ու էդ իննայողութուններով ձեր ուսումի, խելքի, հասկացո-
ղութան հըմար ծախսէք, որ հըմէն ինչ իր տեղին ու իր ար-
ժէքին գնահատէք, որ լաւը վատով, վատն էլ լաւով չը բա-
ցատրէք:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ՀԱՄԵՍ ԷԼԻՔԻ

Չ'եմ կարծում ստուց լաւ նասիհաթ էնի աշխարհում:
Իմ աղիղին, մարդու տունը քանդողը անհամեստութունն ա:
Ո՞վ ուզում ա ընի: Երբ մարդ իրան շատ ա երեակայում,
երբ կարծում ա որ ինքը մէ մենծ թօֆա ա, երբ խելքին է-
նչնց ա գալի որ աշխարհի գործերը չեն պտտի ագեար ինքը
չընի ըգդուց բաղբախտ մարդ չը կայ:

Բալքեամ էդ ամբարտաւան ինքնահաւանութունը ջա-
հէլ օրերի մէ հիւանդութուն էնի: Երբ երիտասարդ ու ան-
փորձ տղէն ա բոթբոթացնում մարդ ներողամտութու-
նով ա մօտենում, ասում ա հալամ ոտքը քարին կիր չի արէ,
հալամ հօրը մօրը զուշաղումն ա, հալամ նեղ օրի չի հասէ,
հալամ փորձառութուն ձեռ չի գցէ, հալամ տաքը-պաղը չի
հասկացէ:

Ամմա, երբ տեմնում էս բազի մարդիկ ու կնիկներ՝ որ
իրանց վրայ հէյրան-ջէյրան էն էնում՝ երբ ճամբայ էն է-
թում, քիչ ա մնում պատմութան զորտի պէս, կովի մենծու-
թունը ձեռք բերելու հըմար տրաքեն, մէ բարեկ որ բարեկ ա
բերաններիցը զուս չի գալիս, ֆաղաթ աչքներն են օլըրումն
Գլոխներն էնքան բանձր էն պահում որ եղէզի հետ վիճող
կաղնու պէս ամպերին ա համնում, իրանց փողի, իրանց
ուժի, իրանց դիրքի, իրանց գեղեցկութան երեակայութամբ





քիչ ա մնում աստղերին էլ ասեն՝

— Զէ՞ք տեսնում որ մենք էնք գալիս, խոնարհւեցէք:
Աշխարհը թա աշխարհ ա էլէ մեզ պէս թօփա չի ունացէ. . .

Էլ չեն մտածում որ ոչինչ չի դիմանում էս աշխարհին, էն մենծ կաղնիները կայծակներն ու փոթորիկներն էն տապալում, էն սիրուն իրեմները խորշոմներն էն ծածկում, էն ջահէլ օրերը ծերութան հիւանդութունն ա կլանում, աշխարհի տւածն աշխարհն ա ետ առնում, հող էիր հող ես դառնում:


Ամմա զուրբան ընեմ էն թարձրեալի մենծ զօրութան, շատ անգամ դասը լաւ տալու հըմար, մնացածներին օրինակ ընելու հըմար, աււալ գեղեցիկին տգեղացնում ա, փողաւորին աղքատացնում ա, ուժեղին թուլացնում ա, բանձրին իջացնում ա ու մօտաթի էդ հալաթում պահելուց յետոյ ա ոչընչացնում, ինչ ա որ՝ համեստ էնեն:

Էդ ա որ թարելոնի աշտարակը քանդւաւ, աշխարհը ջրհեղեղ էլաւ, ագեար ստրանց էլ չէք հաւատում, աղալան հաւատացէք որ էդ պատմութունները ձեզի դաս տալու, օրինակ ընելու հըմար ա: Վերջապէս պատերազմին հո՛ հաւատում էք, էդ էլ մէ բալա ա որ մարդկային պատմութեան մէջ կրկնում ա ու ետ ա կրկնում, որպէսզի մարդը իր զօրութան մէջ իրան չը կորցնի, խելօքանայ ու համեստ էնի:

Ի՞նչ որ էլ ընէք, ո՛ւր կ'ուզէք ընէք, ի՞նչպէսդ որ ըլնէք, ի՞նչքան էլ ունենաք, ինչ կարողանաք, ի՞նչքան զօրանաք, Սուսան թաջու էս նասիհաթը մի մոռացէք՝

Համեստ էլէ՞ք. . .

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ



ՊԱՐՈՒՅՐԻ ՀԱԳՆԻԿԻՑ

ՈՒ ՄԱՐՈՒԻՑ

Էլը էս անգամ խանումները ինձ դէմ բարկանալու էն: Ամմա ինչ արած, օղորդ խօսքը պէտք ա ասել: Մախսուսան ես, գիշերը չեմ կարողանայ քնեմ, ագեար մտքիս մէջ մէրան ընի, սիրու ասի որ պէտք ա ասես ու ես ասած չըլնեմ:

Հըմէն օր կարգում էք, տեսնում էք պատերազմը հինչ ա անում, հինչպէսդ ա աշխարհ իրար տալի ու օրը մէ նոր աւելում էր աւելում: Ֆլան երկրում ուտելիքն էն պակսարադբախտի ա ստեղծում: Ֆլան երկրում ուտելիքն էն պակսարադբախտի ա ստեղծում: Ֆլան երկրում ուտելիքն էն պակսարադբախտի ա ստեղծում: Մէ ուել օթօմօթիլ էն գրաւում, մէ ուրիշում հագնելիքը, մէ տեղ օթօմօթիլ էն գրաւում, մէ ուրիշ տեղ միս ուտելն էն արգելում: Մէ խօսքով հըմէնը զրկանքի ու զահմաթի մէջ էն ընկէ չունքի պատերազմի ճանկերի մէջն էն:

Փառք Աստուծոյ, փառք Տիրոջը, փառք մեր մենծ թագաւորին ու մեր պետութան, մենք բիթարաֆ էնք մնացէ ու հեռու հըմէն տեւակի գլխացաւից: Ամմա էս փաստ չ'էլաւ որ պէտք ա թեթև մտածենք ու լուըջ չ'էլնենք:

Էս անցած շաբաթւայ մէջ որ խանումին որ հանդիպամ, որ օրիորդին որ տէսամ, ֆաղաթ մօտից ու շորից խօսացին: Ա՛յս շամեցէք էդ խօսացկութուններից մէ քանիսը ձեզ ասեմ դուք ինքներդ դատէք. . .

— Ա՛յս շատ անտրամադիր եմ. . .



— ի՞նչու:

— Ամուսինս էրկու տասատ շորի հրաշալի կտոր ա առէ, ամմա վերջին մօտի ժուրնալները չեկան պատերազմի պատճառաւ, չ'եմ իմանում ի՞նչ անեմ:

Մէ ուրիշը:

— Թո՛ղ, ի սէր Աստուծոյ, ինձ ոչինչ չի հետաքրքրում, մարդ եթէ ամիսը մէկ կամ էրկու ձեռք զգեստ չ'ունենայ ինչի պէտք: Տղամարդիկ դրա վրէն էն գժւում: Ամէն անգամ մէ նոր հագուստի մէջ տեսնելիս կարծում էն մէ նոր հրեշտակի էն հանդիպում. . .

Էս էլ մէ երրորդը:

— Գնում էմ բաղար մի էրկու ձեռք շոր առնեմ. . . էս շաբաթ մէ հարսանիք ունենք, մէ նշանադրութուն, էրկու հրաւէր: Մարդ հօ չի կարող հրմէն տեղ նոյն շորերը հագնէ. . .

Ու էսպէս քանի հատ որ կ'ուզէք, որքան կ'ուզէք հրմէնն էլ՝ շոր, թուալէթ, զլխարկ, կօշիկ: Հիմի մենք մեզի ենք, արէք խոստովանւէք, որ կնիկները միշտ էլ ծանրը թողած թիթեի ետևից էն վազում: Մաղսուդս մեր հայերիս հրմար ա: Թամաշա արէք ամերիկացի տիկիններին, տեսէք ձեզնից շատ աւելի հարուստները մէ պարզ հասարակ կտորից շոր էն հագնում՝ սովորական կօշիկ ու զլխարկ, ու շատ աւելի հետաքրքիր էն քան թէ էն տիկինները որ մօտի անունով ահագին փողեր էն փչացնում ու վերջն էլ հարուրից 80 այլանդակ տեսք ունեն:

Մաքուր հագւէ՛ք, պարզ հագւէ՛ք, պրծաւ գնաց, աւելորդ փող ունէք նեղ օրւայ հմար պահէք, ձեր էրէխէքին կրթութուն տւէք, չքաւորին օգնէք, ձեր երկրի առաջադիմութան պէտքերն հոգացէք:


Էս օրերին ագեար ծանր ու թեթև չ'անէք, օգտակարն

ու վնասակարը իրարից չը ջոկէք, ձեր իսկական բարձրութան վրայ չկանգնէք բա էլ երր էք անելու:

Էլը կրկնում էմ լաւ լսէք. կնկայ յաջողութունը իմ աղիդին պարզութան, մաքրութան ու կոկիկութան մէջ ա: Ոզորմած հոգին էլ որ ինձ հաւանաւ հէնց էս քիթ բերանս էր — մօնթաշ ջահէլ — ամմա առանց ներկի ու բանդի, շորերս էլ պարզ ու հասարակ կտորից: Հիմի դուք գիտէք, ինձնից ասել՝ ձեզնից լսել:

ՍՈՒՄԱՆ ԲՅ.ԶԻ

ՄԻ ՆԱԽԱՆՁԵՔ



Մարդ որ ազնիւ էնի, նաջիր էնի, սիրտը մննծ էնի,
հոգին պայծառ էնի, միտքը լէն էնի, իրա թշնամուն անդամ
լաւութուն կ'ուզի, ընդրա արած խելօք գործը կը գովի, սը-
խալ արարքի հըմար էլ Աստածանից շնորհ կը ինդրի, ինչ ա
թշնամութունը իրանց միջից բալքամ էտէնցով վերանայ:

Ամմա հակառակն էլ կայ, մէկը որ չար էնի, սիրտը
պստիկ էնի, հոգին մութ էնի, իրա հարազատների հմար էլ
մէ լաւ խօսք, մէ գովեստ, մէ գնահատանք չի կարողանայ
լսի, նախանձից, փախիլութունից կ'էրւի, կը փոթոթւի, կը
կատաղի ու աւել պակաս դուս կը տայ:

Մախսուսան հայերիս մէջ էս էյըը շատ ա տարածւէ:
Մէկը հարստացաւ, մէկը բանձրացաւ, մէկը ուսում առաւ,
մէկը գովեստի արժանացաւ, մէկը մէ յաջողութուն ունեցաւ,
բախիլներն իրանց թիքա-փարա կ'անեն, պատճառն հէնց
էն ա որ վիրեն ասանք:

Դուրուսոտ ա . ես իսկի կողմնակից չէմ, անարժանին
գովելու, ինչ ա հօրօխսպորս տղէն ա թարիքն անելու, ես
չուն իմ թայֆին ա պատկանում՝ երկինք բանձրացնելու, մե-
ղա Աստծոյ, ես դէմ էմ: Անշնորհքին դադրդանի անելը՝ ար-
ժէքաւորին անարժանացնել ա, պղինձը ուսկու տեղ նաղել ա,
մեղք ա, յանցանք ա, ոճիր ա:

Ամմա, մէ աղջիկ աւարտել ա, առաջին ա էլէ, մէ տղայ

Եւրոպա ա գնացէ ուսանել ա, մէկը Պետութան գնահատան-
քին ա արժանացէ, մէ բանաստեղծ, մէ նաղդաշ, մէ գերասան,
մէ գրող շնորհք ու տաղանդ ա նշանց տեէ, մէկը աղջօգուտ
գործ ա կատարէ. բարիք ա արէ՝ եկեղեցի ա շինէ, ու հըգար
ու մէկ էսէնց բաներ: Էս հըմէնը չ'ասել: չը գրել, չը գովել,
չը քաջալերել՝ էդ էլ հէնց էնքան յանցանք ու մեղք ա՝ որչափ
անպէտքին ու անպիտանին բանձրացնելը:

Խօսքս էնտեղ ա որ լաւ կանենք մէ քիչ աւել դատող
էնենք, սեր սպիտակից ջոկել իմանանք, մէր նախանձը թա-
ղենք ու ուրիշի յաջողութունից խրանելու փոխարէն ոգևոր-
ւենք: Չ'իմացած, չը ճանաչած մարդու մասին աւել պակաս
դուս չը տանք, չը հասկացած բաներս չը քննադատենք, նախ
քան ուրիշի վրէն էյը գնելը, մէր էյըերը տեսնենք, յիշենք
շաերի քաղցր խօսքերը՝

«Թէ ուրիշին փոս կը փորես.

«Նայիր որ շատ չը խորես,

«Որ երբ դու մէջը գլորւես՝

«Ողջ միաս, ողջ դուրս ենես»:

Ասլան մեր հըմէն գործերը փչացնողը էդ մեր անհաշտ
ու չար տեսակէտն ա, որ մեր հարազատին յաջողութան մէջ
չ'ենք ուղում տեսնել՝

«Ծառի ճըճին ծառէն ա,

«Զար թշնամին տանէն ա»:

Էլն եմ ասում, համեստ ըլնենք, խելացի: Մեր ընկերոջ,
մեր բարեկամի, մէր ծանօթի ու մինչև իսկ անծանօթի ու
աղջակամի ուրախութունով ուրախանանք, կարողութունով
զօրանանք, գիտութունով պարծենանք, որ կարողանանք
ասել՝

«Փընջիւմիջում ձընծաղիկը
«Մանուշակի հոտ կ'առնի,
•Լաւ ընկերաց մէջ մանկիկը
«Օքինակի լաւը կ'առնի»:

ՍՈՒՍԱՆ ԲԱ.ՑԻ

ՀՄԵՆԻՑ ՄԵՆԾ
ԳԻՏՈՒԹՈՒՆԸ

Օղորթ ա որ աշխարհը էս վերջին դարում շատ ու
շատ առաջացել ա, հըմէն տեսակ գիտութունները զարգա-
ցել էն, մենծացել էն, որ մարդիկ հզար ու մէ նոր-նոր գիտեր
էն արէ, ըտղնք հըմէնը իրա տեղը, ամմա հըմէնից մենծ գի-
տութունը էն ա որ ես ձեզ պէտք ա ասեմ, ու հըմէն մէկիդ
էլ լազըմ ա, պէտք ա:

Աշխարհիս մէջ պատիկից մէնծը, ո՞վ որ էլնի, որ տէ
որ էլնի, ինչ միլաթի ու տովլաթի էլ որ պատկանի, հըմէն
բանից առաջ ինքը իրան կառավարել պէտք ա իմանայ:

Էղ տորոշքէն որ տեսնում էք ագեար կառապանչին
ձիերին իտարէ չ'անի, ձիերը կառքն ու ձեզի կը տանեն կը
կցէն փոսը, կը զարկեն ծառին, դիմացից էկող օթօլին, խուրդ
ու խամիր կ'անեն, իրանք էլ ձեզ հետ կը կորսւեն կ'էթան:
Երկէն չ'եմ ուզում անել մաշինն էլ, նաւն էլ, այրօպլանն էլ,
հըմէնն էլ էղէնց, մէ էտարէ անող կ'ուզեն:

Մաղսուդ:

Դուք որ էդ ձեր ազնիւ լեզուն բաց էք թողնում, ազա-
տութուն էք տալիս, ինչ ուզում ա ասում ա, նման ա էդ
ձիերին որ կառապանչին չի կառավարում: Աստուած ձեր
վերջը բարի անի, որտէ որ ձիերը կառքն ու միջինը տանեն,
ձեր լեզուն էլ ձեզի հէնց ընտեղ կը տանի:



Ագեար ուզում էք որ բաղբախտ չընէք, մէ յիմար
խօսքի հըմար խօշ սասաթներդ, ուրախ օրներդ, հանգիստ
կեանքներդ հարամ չ'անէք, ձեր քեալէն, ձեր ուղեղը մօֆա-
թէշ դրէք ձեր լեզւին: Եջազէ մի տւէք ինչ ուզում ա ասի:
Ծանը ու թեթև արէք, չափէք, չափչփէք, ետոյ թողէք որ
խօսայ: Դարտակ-դարտակ զօռ տալուց վիս բան չը կայ աշ-
խարհում, ըտուր հըմար էլ իմ աղիզին հըմէն գիտութուննե-
րից էն մենծը՝ լեզուն կառավարել իմանալու գիտութունն ա:


Էս ա որ լեզւի հըմար հըզար տեսակ ոճ էն գոր-
ծածում, երբ մէկը անուշ ա խօսում, համոզող ա՝ ասում
էն՝ «Քաղցը լեզուն օձը բնից դուս կը հանի», պայմանով որ
գործածելու ձևն իմանան: Ագեար հակառակն ա, ասում էն
«Չար լեզու, օձի լեզու ունի», երբ բամբասելու ու վատա-
բանելու, խառնելու ու կուացնելու հըմար ա ծառայում: Շա-
տախօսին, զամիշ զնողին՝ ասում էն՝ «Երկէն լեզու» ունի:

Մի մոռացէք էս սիրուն առածը՝ «Օձի կծածը կը լա-
ւանայ, ամմա լեզւի կծածը չի լաւանայ»:

Էս հըմէնը ասելուս նպատակն էն ա որ դուք իմանաք
քի լեզուն ինչքան մենծ դեր ա կատարում մեր կեանքում,
կտարէ արած լեզւով աշխարհի բարիքն ու խօշին ձեր դովրը
կարող էք հաւաքել, ապատութուն ունացող լեզւի շնորհիւ-
ամէն օր բաղբախտ կարող էք ընէք: Լեզուն մէ աստւածա-
յին բանալի ա որ հըմէն դուռ կը բացի: Ցաղաթ ձեզ ա մը-
նում որ իմանաք որ զուռը բացէք, որը ոչ:


Ցրանսացիներն մէ շատ լաւ առած ունեն, որ ասում
էն «Փիշ ազ խօսելը օխտն անգամ լեզուն պէտք ա պտտա-
ցընել բերնի մէջ»:

Ագեար էսպէս անել իմացաք, բարիքեալա, դուք լե-
զու կառավարելը կ'իմանաք ու երջանիկ կ'ընէք, ագեար չէ
վայ ձեզի, դուք ինքներդ ձեր բաղբախտին կ'ստեղծէք:
ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ



ԸՆԱՆԵՎԱՆ ԿԵԱՆՔ





ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ

ՄԱՐԴ ՈՒ ԿՆԿԱՅ ԹԱՐԻՖՆԵՐԻՑ

Արդ էլնի շատունց ա ինչ մարդ ու կնկանից չէմ խօսացէ, հար չանդ շատ նոր նոր բաներ էմ տեսէ ու լսէ, ամմավազդթ չի էլէ սարը ֆօրսաթ մէ սոհբաթ անեմ:

Իմաստուն մարդիկ հըմէն ազգից ու հըմէն ցեղից շատ
ջուռ բէ ջուռ միտքեր էն գրէ կնիկների ու տղամարդկանց
վրէն, շատը կնիկների վրէն՝ քան տղամարդկանց։ Էղ էլ մա-
լումա էրկու պատճառ ունի, ավալ էն քի էղ գրողների
մենծ մասը տղամարդ ա ու շահագրգուած ա կնիկներով,
դովվում էն որ կնիկներն իրանք Աստծուց էն ուզում որ տղա-
մարդիկ իրանցով զբաղւեն։ Եանի էղ էլ բնութան մէ մենծ
զաղանիքն ա։ Էղ ա որ տղէն ա աղջկայ ետեկից ընկնում,
տղէն ա առաջին ջսարաթը անում, տղէն ա աղջկան կնութան
ուզում, տղէն ա աղջկան իր տունը տանում, տղէն ա տան-
տէր էլնում, տղէն ա իր անումը աղջկան տալիս, էրէխէքը
տղի անումով էն կոչւում, տղէն ա ընտանիքի տէր կանդ-
նում։

Հիմա ինձի կ'ասէք, Սուսան թաջի, Էղ հըմէնը քեզնից
լաւ գիտենք, Էլ հԵ՞ր էս էդէնց երկար բարակ շարում, թազզա
բան ունես էս ասա, ըդդո՞նք քեօննա էն, մարդ չը կայ որ
չիմանայ:

Հարաբիքեալլա, ևս հէնց էս խօսքերի մաթալն իմ որ
իմ ուզածս ասիմ: Պէտք ա խառնել որ քեօննէքը տակ

Էթան, ու թաղէքը իրեւ գան:

Ազեար էդ հըմէնը իմանում էք, էյ ազիզ խանումներ,
հէր էք ձեր մարդկանց հետ փիլա սնում, դուք ձեր գործն
ու տեղը մոռանում, ձեր թաքլիֆը կիսատ թողնում, տղա-
մարդկանց հետ հըմէն խնդրում, հըմէն բանում եկ-դօ անում,
ջղայնացնում, ու վերջն էլ քի՛ էլ հիմա քաղաքակրթութունը
էդ ա պահանջում։ Մէ բան լսեր էք, ամմա, լաւ չ'էք հաս-
կացէ, էդ ա որ հայ՝ օրը նոր՝ մարդ ու կնկայ կոիւը նոր,
գործը տէրտէրի՛ եկեղեցականի, խոռվելու, բաժանւելու՝ ա
համնում իրա տեղը, ջահել-ջուհուներն էլ էդ տեսնելով
խրտնում են ու չ'են պսակւում քի՛ պսակւողների զէնդէկին
թարիֆ չ'ունի՛


Մեր պարսիկ եղբայրներն ասում են «Եշվէքա բար սր գեարդէց»: Ազեար հիմա գլխից բռնենք ու կամաց-կամաց էս ինդիքները մէ քիչ հալաջի անենք, կը տեսնենք որ քաղաքակրթութան ասածը իրա տեղը, կնկայ թաքլիքը իրա տեղը, մարդինը իրա տեղը, հըմէն ինչ խելացի ու պարտաճանաչ գործելակերպի մէջ ա որ իրա սիրուն տեսքն ա առնում: Տեսական ականավոր առ իառ-

Սխալ չը հասկանաք, ագեար ձեզնից պատաս, չը կար-
ծէք որ թամաս էյբն ու մեղքը ձեր վրէն էմ գձելու, չէ՛, խէյր,
տղամարդն էլ իրա եղով տապկւի, ամմա մէ բերանից էրկու
երգ մէ անգամից դուս չի գալ, ձերը որ վերջացրամ ետոյ ըն-
դոնցը կ'սկսեմ: Բալքեամ հըմէնիդ հըմար չէ մէ քանիսիդ
հըմար օրտակար էլնի ոչինչ, էդ չը պսակւողներին էլ մէ
հըմար էլնի, մէ ճամբայ, թիւները փոխանակ շատանալու օրա-
դաս էլնի, մէ ճամբայ, թիւները փոխանակ շատանալու օրա-
դաս էլնի, մէ ճամբայ, թիւները փոխանակ շատանալու օրա-
դաս էլնի:

Հապէս խօսալով էթալու էմ ձեղ էլ հետո քաշ տաս,
մինչև տեսնենք ուր կը հասնենք: Ըշտահներդ պահէք էկող
շաբաթւայ հըմար:

ՍՈՒՅԱՆ ՀԱԶԻ

ՀԱԻՍՍԱՐՈՒԹՈՒՆ



Հմէնից առաջ արդ անեմ, քանի օրիորդ էք խելքներդ գլոխներդ ժողւէք, դուք որ ասում էք՝ «Ել առաջւայ այեամը չի, կնիկը տղամարդու հընկերն ա, հաւասարն ա» էդ ասածներդ հասկացէք:

Հընկեր եանի ի՞նչ, եանի՝ տիսուր օրւայ միսիթարոդ դժւարութան մէջ քօմաք, նաօմիտի օրերին՝ օմիդ, պաշտպան, ուժ, կարողութուն:

Սկեար էս հըմէնը հասկանաք ու գործադրէք ձեր տան հիմքը զրեր էք, հաստատ ու արխային էլէք որ երջանկութունը պատուհանի առջեն ա, մէկ էլ տեսաք ներս կընկնի:

Բազբախտին էնտեղ ա որ շատ աղջիկներ հընկերը ուրիշ տեսակ էն հասկանում, եանի էն որ պէտք ա տղամարդու հետ հըմեն տեղ մտնեն, հըմէն բան անեն, հըմէն տեսակ գործի ու խօսքի շարիք ընեն, տղամարդու ծանօթների ու բարեկամների հետ բաֆիդ դառնան, հըզար ու մէկ էս տեսակի ծուռ բաներ:

Ել չեն ասում որ էս հըմէնը սխալ էն թարգմանում ու հակառակ նաթիջա կ'առնեն:

Եկանք հաւասարութան: Հաւասար՝ չի նշանակում որ ինչ որ տղամարդն ա անում կնիկն էլ հէնց էն անի, էս դա-

տարկ ու անիրաւ աղիդէն միտս ա բերում մէ շատ սիրուն պատմութուն:

Ասում էն, մէ մարդ իրա ծառայից շատ կասկածում էր կանչաւ ու ասաւ՝

— Տե՛ս, Յովսէփի, ակար էթաս տէրտէրի մօտ խոստովանւես, ես քեզի կը պահեմ, ակեար չէ՛ դուս կանեմ:

— Աղա, ջաւաբ տւաւ Յովսէփիը, ես օմրումս չ'եմ խոստովանւէ, ես չ'եմ իմանում խոստովանւելն ինչպէսդ կընի, արի էդ շառը իս գլխից քանդի:

— Զէ՛ ու չէ՛, պէտք ա խոստովանւես, ոչ մէ դժւարութուն չ'ունի, կ'երթաս տէրտէրի մօտ ինչ որ էն ասաւ դու էլ հէնց էդ կը կրկնես:

— Հէնց է՞դ աղա, էդ քի մէ բան չի, ասաւ Յովսէփին ու գնաց:

Տէրտէրը ներս տարաւ Յովսէփիին ժամը, չոքաւ, էն էլ չոքաւ ու ասաւ.

— Ասա, մեղա Աստծու...

Յովսէփին էլ կրկնաւ:

— Ասա, մեղա Աստծու...

— Օրհնած էլ «ասան» մի ասա, ասա մեղա Աստծու...

— Օրհնած էլ «ասան» մի ասա, ասա մեղա Աստծու...

— Ա՛ մարդ գիծ էս, բարկացաւ տէրտէրը:


— Ա՞յ մարդ գիծ էս, ձէնը գցաւ գլխովը Յովսէփը:

— Գուս կորի եկեղեցուց, հրամայաւ տէրտէրը:

— Գուս կորի եկեղեցուց, ճշաց Յովսէփը:

— Անիծից արմատ, ասաւ տէրտէրն ու հողաթափն հանելով տւաւ Յովսէփի գլխին . . .

— Անիծից արմատ, ասաւ Յովսէփը ու կիվէն հանելով խփաւ տէրտէրի գլխին . . .



Ու էսէնց իրար ծեծելով ու ուշունց տալով էրկուսով
դուրս էկան եկեղեցուց:

Յովսէփն էկաւ աղի մօտ: Աղէն հարցրաւ.

— Խոստովանւա՞ր:

— Խոստովանւամ աղա, ամմա աջար դժար բան ա էղէ,
ասիր էն ջոմաղն էլ հետ տանիմ:

Հիմա մեր օրիորդների ու տիկինների հասկացողու-
թունն ա: «Հաւասարութունը» «ինչ որ տէրտէրն ասաւ»-ով
չը պէտք ա բացատրէն: Աղջիկը, կնիկը իրա անելիք աշխա-
տանքն ունի ընտանիքի մէջ, տղամարդն էլ իրանը: Մէկը
միւսի քօմակն ա, մէկը նեսը, մէկը զուսը, հաւասարութունը
աշխատանքի բաժանման մէջ ա, նա քի նոյն բանը անելու
մէջ:

Ես «Ֆասեմ դուք ֆարազադ կը հասկանաք, էլ լազմ
չի որ իրար հետ վիճենք: Ասլան վէճը ֆայդա չ'ունի, ագեար
դուք ձեր էշը քշէք ու ևս իմս, վերջն էլ կոիւ կընի: Իմ
մաղսուդս մէ ճամբան նշանց տալ ա, որ համեստ, սխալւած
շախսը դուզ ճամբէն գտնի: Ագեար չէ, ձեր ճամբով որ էղաք,
նաթիջէն նէնց էն կը լինի որ էս օր ձեզանից շատերը մէջն
էրւում էն ու չ'են կարողանում դուս գան: Հիմա դուք զիտէք
դուք, ինչպէստ կ'ուզէք էնպէսդ արէք:

Ես էսէնց գիրա-գիրա էմ խօսում, որ կարողանաք մար-
սէլ, եղոտ կերակուրները շատ ու շատ ուտելը, փոխանակ
մնունդի վնաս կը տան: Բաղին էլ էկող անզամ:

ՍՈՒՍՏԸ ԲԱԶԻ



ԾՈՒՐ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ

Կնիկների էն մենծ բաղբախթիներից մէկն էն ա, որ
շատերն իրանց խելքով չեն դասում: Էս կնկայ ասածը, էն
կնկայ խօսածը իրանց հըմար դասուր ա ընում:

— Աղջի, մարզիդ շատ ականջ մի կախի, իրես կ'առնի:
— Ես ջաւաբն էլ էմ տալիս. զլսին էլ էմ ճւում:
— Տղամարդին որ իրես տաս աստառ էլ կուզի:
— Դու քո սրտիդ ուզածն արա, թող ինչքան ուզում ա
դժգոհի:

— Խոսվիր, նազ արա, թող նազդ քաշի:
— Ինքը մէկ ա ասում, դու տասը ջաւաբ տուր
— Ինչ որ ինքն ա անում դու աւելին արա:
Էլ որն ասեմ, որը թողնեմ, հարուր հըզար էսէնց յիմար
խորհուրդներ, որ մէկ-մէկ աչքներիդ ոչինչ կ'երեայ, ամմա
հար մէկը ստոնցից մէ նշտար ա, մէ սաեղ, մէ կաթիլ զահար՝
ընտանեկան խօշբախտութան հըմար:

Էս խօսքերով ու էս գործերով, մէկ օր էլ կը տեսնէք
մօհարաթի ծառը թառամել ա ու ծաղիկները քի հիշի, տե-
րեւներն էլ թափել ու մէջտեղում, խողի մէջ, անկւած մնա-
ցեր ա չոր ու ցամաք մէ փէտ, որ ոչ ոք էլ չի հասկանում
էդ ինչ ա:

Թշնամութուն էրկու սրտի մէջ, հակառակութուն էրկու
հոգու մէջ, անհամաձայնութուն էրկու զլսի մէջ, նաթիջէն





հըմէն օր կոիւ, հըմէն օր խոռվութուն, հըմէն օր ճիղ-դադի
ինչ ա կնկայ աղիդով հաւասարութունը քանդւեր ա ու իրա
իրաւունքը ոտի տակ գնացէ:

Դուռ ու դրկից, հարեան, էդ խորհուրդ աւողներն էլ ի-
րանց հերթին, օր աւուր կրակը թաժացնում էն ու սադ քա-
ղաքը թնդացնում:

Ասում էն մենծ գողերը միշտ պստիկ գողերի յանցանք-
ներից էն խօսում, որ իրանց մենծ էյբերը ծածկեն:

Հըմէն խնդրի մէջ էլ նոյնն ա: Շատ-շատ ուրիշ կնիկ-
ներ որ իրանք իրանց բատրախտացրեր էն, ուրախացած էս
նոր տնաքանդութունից, նոր զժրախտացած կնկանից, չէ-
ղածը էղած անելով, պատմութունն էլ մենծացնելով, պոչ ու
կոտոշ գնելով հօ-հօ էն անում ինչ ա իրանց նախանձը կե-
րակրեն, ու իրանց եախէն ազատեն:

Ամմա, ագեար ինձի լսէք, ճիշտ հակառակը կ'անէք,
հըմէնից առաջ ձեզ ասեմ, մարդ չըկայ որ մէ ուրիշ մարդի
իրանից աւելի սիրի, կնկայ խնդիրը քի բոլորովին տարբեր
ա: Ասլան կնիկ չը կայ որ մէ ուրիշ կնկայ էս եա էն բանին
չը նախանձի ու մէ էլը չը գտնի:

Ագեար ուզում էք որ երջանկութունը բլրուկի պէս ձեր
տան մէջ կլկլացնի, ձեր սրտերը ըուրումնաւորի, ուրախու-
թունն ու ցնծութունը անպակաս անի, ոչ ոքի ծուռ ու յի-
մար խորհուրդը մի լսէք, ձեր հոգին մենծութամք ու ձեր սիր-
տը ներողամտութամք լցրէք: Ձեր գլոխը չար մտքերի տոպ-
րակ անելու տեղ, մոհաբաթի, խոհեմութան, ուշադրութան,
հոգատարութան, ինամքի մէ պաղչա շինէք ու աշխատէք
ձեր էդ սերմերը հըմէն օր, հըմէն առթիւ, ձեր ընտանիքի
մէջ ցանէք: Հէջ մի յուսահատէք, մի բարկացէք, մի ջղայ-
նացէք, ագեար էսօր ցանաք չորացաւ, քարի տակ ընկաւ,
աւազի մէջ մնաց, էգուց հողը փոխէք, քարը հանէք, աւազը



ջոկէք, նորը ցանէք, ջուր տւէք խնամք տարէք, Աստւած էլ
ձեզ քօմաք կ'անի, երկնքի ամպերից էլ անձրի կը թափի ու
մէ օր էլ կը տեսնէք որ ծլեր-ծաղկեր էն ձեր սերմերը:

Մի մոռացէք՝ «Ո՞վ քամի ցանի փոթորիկ կը հնձի:»

Դուք լաւ սերմեր ցանէք ու սպասէք, հըմէն գործ
մինչև վերջ պէտք ա տանել, որ նաթիջէն խօշ ու լաւ էնի,
թէ չէ վայ ձեզ: Էն անգլիացի խելօք գրող Օսկար Վայլի
ասածը հըմէնիդ հըմար ա՝ «Ամէն մարդ ինք իրա ձեռով իրա
գերեզմանն ա փորում, եա իրա ուրախութան ու երջան-
կութան ճանապարհը վարդերի ու ծաղիկների մէջ շինում»:


Մէկ խօսքով, էն ասեր եմ, էլը կրկնեմ՝ մեր սիրելի
հայրենակիցների խելօք միտքը:

«Հար գոլի զագի սարը խօդ զադի»:

Եա մեր ժողովրդական առածը՝

«Ինչ որ ցանես, էն կը հնձես»

Խելքներդ գլոխներդ հաւաքէք ու իմ խորհուրդներին
հետեւէք ագեար երջանկութուն ու ուրախութուն էք փնտում:
ՍՈՒՍՍՆ ԲԱԶԻ





Կնիկները հըմէնից կարեորը մոռանում էն ու զարմանում, որ իրանց մարդիկը շառ անգամ պաշում էն իրանցից, հէնց կնիկների արարքի պատճառաւ:

Որ կնիկը որ ուզում ա դուս գայ քուչայ, եա էլա մէկի տունը զոնաղ, եա էս կող, եա էն կող, լւացւում ա՝ մաքրում, ոտից-զլոխ փոխում ա, հըմէնից սիրուն շորեն ա հազնում, անուշահոտութուն ա խրում, մազերն ա սարքում քիթ-քերանն ա գեղեցկացնում, էլում ա մէ հուրի, մէ փէրի:

Ամմա արի ու տես, շատ կնիկներ իրանց մարդի հըմար թափթփած շորեր էն հազնում, մազերն տակն ու վրայ, իրեները քրտինք, աչքերի տակը կապտած, եա սոխ էն հոտում եա եղ, ձեռներն անմաքուր, ու զարմանում էն որ իրանց մարդիկը կշատանում էն իրանցից ու դուսինները թագա սիրահարում էն իրանց վրէն:

— Զէ՛, չէ՛, դու իմ զագրը չես խմանում... ասում էն իրանց մարդուն:

Ու իրանք իրանց՝ սխալ միտք ու սխալ կարծիք էն կազմում. մէ օր էլ սխալ գործի մէջ էն ընկնում: Վերջը խօսք չը կայ, քոռ փոշման էն էլում, ամմա ինչ Փայդա, բանը բանից անցած ա ըլում:

Զէ՛ք հաւատայ, թէ որ ձեղ մէ պատահած դէպք պատմեմ:



Մէ օր, մէ պսակւած մարդի հետ մէ մենծ փողոցից էթում իմ: Խօսում ինք մաշդ ու կնկայ անվերջանալի խընդրից:

— Է՞ն, փոշմանել եմ որ պսակւել եմ, Սուսան Բաջի, էս օրերին մարդ կը պսակւի, ասում էր պարոնը, որ կողդ նայում էս մէ գեղեցկուհի, մարդ ինչպէսդ էս բոլորին թողնի էթայ մէկին առնի, էն էլ տեսնես ինչ էյրեր ունենայ: Տե՛ս, տե՛ս, էդ բոյով բուսաթով սիրուն ջէյրանը, էդ որ ետեւց էդ տեսքն ունի, առաջից տեսնես ինչ կը լինի, մարդ ինչպէսդ տեսնի ու չը սիրահարւի:

Էս խօսքերի վրէն քայլերը մենծացրաւ ու ինձ էլ հետը քաշ տւաւ, որ էդ գեղեցիկ կնկայ իրեսը տեսնի... Ամմա մէկ էլ ինչ տեսնի... Ասեմ չէ՛ք հաւատա... իրա կնիկը զուգ լած-զարդարւած...


Էլ ես ինչ ասեմ, էս իմ աչքովս տեսածն ա: Տասը տարուց ի վեր պսակւած մարդը իրա կնկան չ'էր ճանաչում չուն քի տունը տեսածն ուրիշ էր, դուսը ուրիշ,

Հալա էս մէկ խրատս էլ ուշադրութան առէք, թա էլ ուրիշ խնդիրներից խօսամ ձեզ:

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ



ԿՆԿԱ ԹԱՐԼԻ ՖԼ



Եկեք հիմա իմ խրատները լսէք հըմէնից առաջ, էս կնկայ ու էն կնկայ խօսքին ականջ մի արէք: Հաստատ իմացէք, որ ոչ մէ կնիկ, էնի ձեր բարեկամը, ձեր հօրքուրը՝ ձեր մօրքուրը, ձեր քուրը, ձեզի իրանից շատ չի սիրում: Բնորանց ասած խօսքերը, թէկուզ էն ամենայաւ ձևի տակ, զէլ ազ չարութուն ու փիսութուն, ուրիշ ոչ մէ նպատակ չ'ունեն:

Դուք ձեր խելքովը դատէք: Երբ ձեր մարդի մօտ մէ էյք էք տեսնում մտածէք որ, խօը հըմէն մարդ մէ-էրկու էյք կ'ունենայ, էս էլ իմ մարդիս էյքերն ա, ինչ արած: Ագեար տեսաք ըտենցով չ'էք մխիթարում, ունցած առաւելութունները միտներդ բերէք. Էս համոզւած էմ որ ագեր խելացի էք բաւարարւէք:

Էս էլ ասեմ, հարուրին հարուր վստահ էլէք, որ ոչ ոմի մարդը ձերոնքից լաւը չի: Ագեար էլ բազի կնիկներ էք տեսնում, որ իրա մարդին թողել ու ուրիշին ա առել, ես հակառակը, իրա կնկան թողել ուրիշի կնիկն ա առէ, նէշ մի կարծէք, որ ընդոնք առաջւանից աւելի երջանիկ էն: Էսմախ-ֆուրուլա, ֆաղաթ պարտաւորւած էն, որովհետեւ էլ ճարչ'ունեն, ասել հայկական առածը՝ «Վեր թքնեն բեխերն ա, վար թքնեն մօրուքը»:

Երբ որ ձեր ամուսնը տիսուր ա, ջղայնացած ա, յոգ-

նած ա, դժգոհ ա, զուք էլ կրակի վրէն եղ մի ածէք, ընդհակառակը, սիրով, զուրգուրանքով վերաբերւէք, աւելի քաղցրացէք, կը տեսնէք, որ հըմէն բան լաւ կըլնի:

Խոռվել բար ասլան ձեր կեանքից ջնջէք: Ագեար ձեր մարդը ձեր վրայ բարկանայ ինչ էլ որ ասի, խոռվկանութուն նշանց մի տւէք: Վալլահ-բիլլահ ձեր գործը աւելի յաջող կ'ելնի, թա էն քի՝ զուք ինքներդ ձեր ձեռքով ձեր ամուսիններին ձեղանից հեռացնէք ու ուրիշներին մօտացնէք:

Դադիմ խօսք ա՝ «Կինը տան բանալին ա»: Ինչ զուռ որ կապւի զուք պէտք ա բացէք և ոչ թէ՝ էս եա էն պատճառաւ զուռերը կապէք:

Ֆրանսացի էն յայտնի Տիտրօն ասում ա՝ «Կինը առաջին բնակարանն է մարդուս»: Մէ բան արէք, որ տղամարդը էդ բնակարանում խօշ անցկացնի, նա քի տարին տասներկու ամիս նախօշ:

Իրականացրէք Աէսինկի խօսքերը՝ «Կինը տիեզերքի զլուխ գործոցն ա», մի բան արէք, որ տղամարդը ձեր շնորհիւ հրաշքներ գործի, անսանելի զիւտեր անի, ու փառքն ու պատիւր իր սրտի վրէն, իր զիւի վրէն դրած ձեզի տայ:

Լամբնէն ասում ա՝ «Կինը մէ ծաղիկ ա, որի անուշանոտութունը շուքի մէջ անգամ բուրում ա», աշխատէք, որ տղամարդիկ մինակ ձեր էդ բոյրն առնեն, պատճառ մի էլէք, որ յետոյ խնդիրները խառնւեն ու հոտերն էլ վոխեն...»:


Տիկին զը Սարդարին ասում ա՝ «Կնոջ սիրտը մէ վիճ ա, որի յատակը ոչ ոմ չի ճանաչում»: Էդ վիճի մէջ շատ բան կարող էք թաղել, որապէսզի ձեր երջանկութունը, ձեր ուրախութունը չը քանզւի: Եւ վերջապէս աշխարհի էն մենծ մարդի խօսքն էլ իմացէք Նաբուկոն ասում էր. — Աշարհի առաջին կինը էն ա, որ հըմէնից շատ զաւակ ունի:



Մէ քիչ էլ էրէխայ ունացէք, թէ՛ ձեզ, թէ՛ ձեր ընտանիքի,
թէ՛ ձեր ժողովրդի, թէ՛ ձեր երկրի և թէ՛ մարդկութան մէ
օգտակարութուն ցոյց տւէք:

Ագեար էս ասածներս անէք, վալլահ-բիլլահ իւշ կը լ-
նէք, թէ չէ քի տարին տասներկու ամիս խօշբախտիի հոտե-
սից կը վազէք ու թիթեռնիկների պէս դժբախտ կէնէք: Զեր
տեսած լուսը, մէ օր ձեռներդ կ'էրի, մէ օր թեռներդ, մէ օր
ուսներդ, մէ օր գլոխներդ, մինչև որ մէ օր էլ սիրտներդ
քեաբար անի ու նոր հասկանաք իմամ Ալիի մենծ խօսքերը:
«Մարդիկ մեռնելու վայրկեանին էն զարթնում»:

ՍՈՒՍՍՆ ԲԱ.ԶԻ



ՏՂԱՄՄՈՒԴՈՒ ԹԱՔԼԻՖԸ



Աղան ակեար իսկական պատճառն ուզէք իմանալ, որ
հէ՞ր ա կնիկը էսքան խորամանկ, կը տեսնէք որ վերջը տղա-
մարդը մեղաւոր դուս կը գայ: Զունքի աշխարհի մէջ հըմէն
իրաւունք իրան ա տեղ ու կնկան իրա հպատակը շինել:
Կնիկն էլ տեսնելով որ տղամարդի հարիֆը չի էնում, դա-
րերի ընթացքում «անճարը կ'ուտի բանջարը» խորամանկու-
թունն ա ընտրել տղամարդի հախից գալու հըմար:

Ամմա, ակեար տղամարդն էլ չի ուզում իրա կնկան
խորամանակ տեսնի, պէտք ա մէ քիչ զատր տանի անի, նա
քի աքլորի պէս կու-կու-լի-կու անի ու բովթ փշի: Ծուռ նըս-
տենք դուզը խօսանք, ակեար էս աշխարհի հալ զրողներն ու
շաէրները կնկայ մէջ օձութուն էն տեսէ ու կատւի խասիաթ,
տղամարդու մէջ էլ յաւիտենական խորուզն ա ու շան հալաթ:

Բստոնք ճիշտ ա ծծաղալու կողմերն են, ամմա, տղա-
մարդն էլ պէտք ա մէ քիչ կնկան ուսումնասիրի, աշխատի
էնենց վարւի որ՝ կեանքը բեռ ընկելու տեղ, ու մարդիկ էլ
բեռնակիր՝ բար աքս մէ բաղ էլնի ու մարդիկ էլ մէջը խաղա-
ցող էրեխէք:

Միտս ա գալիս հին օրերի երանելի Լաղրօ՝ բանաստեղծը
որ կ'ասէր՝

«Էս աշխարհը մէ մենծ բաղ ա,
Մալլաղ տուր ու մէջը խաղա»:





Տղամարդը կնկան իրեսի վրայ չը պէտք ա զցի, մընակ
իր բաւականութան համար չը պէտք ա տնարարութուն,
գործ, աշխատանք պահանջի: Պէտք ա ընտրա կարդալու,
սովորելու, գւարճանալու, ուրախանալու միջոցներն ըստեղծի:
Պէտք ա կնկայ սիրտին տիրանայ, հոգուն տիրանայ, պէտք
ա խելացի պարտիզանի պէս, չոր տերևները կտրտի, ժա-
մանակին ջուր տայ, պահի պահալանի, որ բնութան էդ տուն-
կը, էդ պտղատու ծառը, անուշ հուսով ծաղիկներ, քաղցր
պտուղներ տայ, ու ամուն շոգին իրա հովի տակ զովու-
թուն բերի տղամարդին:

Էս շաէրանէ խօսքերի մէջ կեանքի թամամ իմաստն
ա թաղւած, էրնէկ էն տղամարդին, որ կը հասկանայ: Զը հաս-
կացողը ասլան պէտք ա չը պսակւի, ակեար չէ, ինքը քի
բատրախտ կընի ոչինչ, ուրիշների բատրախտութան պատ-
ճառ էլ կը դառնայ:


Դատիմ լսերեմ կ'ասին.— «Կնիկը, էրէխառութան մէջ
նոր բացւած ծաղիկ ա՝ պէտք ա մշակեն: Պատանեկութեան
մէջ անդեկ նաւակ ա՝ պէտք ա զեկավարեն: Երիտասարդու-
թան մէջ ամենահամեղ պտուղն ա՝ պէտք ա վայելեն: Ծե-
րութեան մէջ էլ, ափսո՞ս, մէ մենծ բեռ ա՝ պէտք ա տանեն»:

Ամմա, միտս ա զալիս մէ ուրիշ ժողովրդական խօսք,
որ ասում ա:—

«Աղջիկները ոսկի էն, պսակւած կնիկները արծաթ,
որբեայրի կնիկները պղինձ, ու պառաւները թիթեղ»:

Հար շանդ էս խօսքերից հըմէն մէկի մէջ մէ իմաս-
տուն միտք կայ, հին դարերի փորձառութուն, ամմա էս էլ
ասենք, որ ժողովուրդները իրանց փորձառութիւնների մէջ
տարրեր տեսակ էն մտածում ու տարրեր զաղափարների զալիս:

Ֆրանսացիներն որբեայրիների հըմար ասում էն, որ
անփուշ վարդեր էն:



Մեր հայրենակից պարսիկներն ասում են,—
«Զան բալասթ, հիշ խանէ բի բալա նաբաշատ»:
«Կինը փորձանք ա, ամմա ոչ մէ տուն անփորձանք
ըլլինի»:

Հար շանդ ես շատ լաւ էմ իմանում, որ հըմէնից շատ
տղամարդուն կատաղացնողն ինչ ա, ամմա ակեար ասեմ կը-
նիկներն էլի կ'ասեն կպար մեզ: Ինչ արած էս վերջին խօսքս
ա: Ասում էն՝ «Փետուրից աւելի թեթև ի՞նչ կայ՝ Փոշի:՝
Փոշից աւելի թեթև,՝ Քամի:՝ Քամից աւելի թեթև,՝ Կը-
նիկը:՝ Կնկանից աւելի թեթև:՝ Հիշչի, ոչինչ»:

Ակեար էս կնիկները հըմէն ոչինչ, չնչին բանը մէ մենծ
պատմութուն ու զադ չը շինեն, ու ըստուր վրայով էլ նոր ու
մենծ-մենծ սխաների մէջ չընկնեն: Տղամարդիկ էլ մէ քիչ
կրակ չը բռնեն ու կնիկների հետ փիլա չանեն, Վալլահ, ըս
տեղծւած դժւարութունների ու դժգոհութունների հարուրին
80-ը կը պակասի: Էս ա իմ աղիղէն, հիմա զուք գիտէք:

ՍՈՒՍՈՆ ԲԱ.ԶԻ

— 25 —

ՊԱՍԿԻԵԼ



Մեր պարոն Հետազօտը, սըալ ա արէ քի՛ ի՞նչ տեսակի աղջիկ էք ուզում եա ի՞նչ տեսակի երիտասարդ պսակւելու հըմար:

Հար մէկը մէ բան ասաւ, վերջն էլ էս խնդիրը ոչ-ոմի հըմար չը պարզւաւ հիշի, հէնց ջաւաք տւողների հըմար էլ մէ գաղտնիք մնաց: Չունքի, իսկական խնդիրը աղջկայ եա տղի՝ էս բանն անելու եա էն բանը չ'անելու մէջ չի, բալքի պսակւելն ի՞նչ ա՝ հասկանալու, ու էդ ճամբով հօլա էթալու մէջն ա:

Հըմէն աղջիկ ու տղայ մէկ չի, մէ քանի սխալ հասկացողութուն ունեն ու մէ քանի էյթեր, որ պսակւելուց ետոյ ա մէյտան գալիս:

Հըմէնից առաջ, արդ անեմ ձեր խթմաթին, որ պսակւելը բաղլաւա ուտել չի: Առաջին ըշթըբան հէնց էդ տեղից ա՝ սկսում: Հէնց որ գիշերը, ուտելու ժամանակայ քաղցրութիւնը՝ առաւօտը զարթնելուն բերնի զառնութան ա փոխուում, նոր են հասկանում քի համեղ կերակուրն ի՞նչ ա, պը. սակւելն էլ հէնց էղպէսդ ա:

Մեր նախապապերը դէս էն ընկէ, դէն էն ընկէ, վերջը պսակւելու ձևն էն գթէ որ մարդ երջանիկ էնի, խօշ էնի, իր էրէխէքով մէ ընտանիք կազմի: Պէտք ա ասել որ էն օրերին




օղորդ-օղորդի պսակւելուց լաւ բան աշխարհում գոյութուն չի ունացէ: Ա, մա, արի աես որ աշխարհը զնալով նոր մտքեր ու նոր բարքեր ա ձեռք բէրէ ու նոր կեանքի ու զիւտերի, նոր սովորութիւնների ու ասյրելակերպի հետ հըմէն ի՞նչ փոխւեր ա: Հէնց էս պատճառաւ հազար-հազար գրողներ, շահներ, փիլիսոփաներ պսակւելու, կնկա եա մարդի հըմար, մէ օր լաւ էն ասէ՝ մէ օր վատ, մէ օր գովեր էն՝ մէ օր չարախօսէ:

Մեր օրերին պսակւողը, աղջիկ եա տղայ, չը պէտք ա իրա զլիսի մէջ աւելորդ երազներ ու յոյսեր կապի, էղածը չ'էղածից աւել հաշւի, որպէսզի ետոյ չը յուսահատւի: Առաջին էշթէբան հէնց էդ տեղից ա սկսում: Հըմէնքը պսակւելուց առաջ, քիչ եա շատ սիրահարւում էն, ու զօռ էն տալիս ի բանց երազներին: Զէ՛ պէտք ա պարզ կերպով ասենք վարշով սամաւարը որ արծաթի տեսք ա առնում, եա զեղնապղինչը որ սսկու պէս փայլում ա՝ լաւ պահելուցն ա, թէ չէ հէնց իրա տեսքն ու փայլն էլ կը կորցնի, կեղտոտ, հասարակ մէ բան կը գանայ: Ազեար հըմէն ի՞նչ իր արծէքին տեսնենք, վերջը չ'ենք փոշմանի, ամմա, ազեար մենք մեզի խաբելու էլնենք վարշովից արծաթ ուզենք զուս բերել ու պղնձից սսկի, չ'ենք յաջողի ոչինչ՝ վերջն էլ քեօս փոշման կ'էնենք:

Էսէնց էլ պսակւելն ա, ազեար շատ չը ոգեորւենք՝ ետոյ շատ չ'ենք յուսահատւի

Արդ անեմ, մեղրալուսնից յետոյ պարզ ա որ ամպն ու փոթորիկը կը գայ, էս աշխարհի օրէնքն ա, էն անգամ էլ ձեզ ասամ, էս բնութան պահանջն ա, էս գոյութան հիմքն ա, էս կեանքի լազաթն ա: Յուրա ձմեռից յետոյ գարուն ա դալիս, սիրուն ամրան՝ տխուր աշխատն ա ծածկում:






Ինչպէսդ հըմէն մէ եղանակի մէ տարրեր ձև էնք հագուբում, տարրեր բան ուտում, տարրեր ապրում, էտէնց էլ պէտք ա պատրաստ էլնենք որ մեղրալումնից յետոյ զառնալուսնի ապրելակերպն իմանանք՝ որ էլը քաղցրալուսնի փոփէնք:

Էլ էլ մնայ էկող անգամւան:

ՍՈՒՍՈՆ ԲԱՋԻ



ՊՍԱԿԻԵԼ

II

Արդ ընի իմ սիրելի պսակւաճների ու ապագայ պըսակւողների խթմաթին, պէտք ա միշտ աչքի առաջ ունենան որ կինն ու ամուսինը մեղրալուսինը վայելելուց յետոյ, չը պէտք ա կարծեն որ կերան կշտացան հիմա շուն ու կատու պիտի ըլնեն, իրար էյր վնտոեն, իրար հակառակեն, ինքնամբ դառնան, ամէն մէկը իրա խօսքն ուզի առաջ տանի, ամէն մէկը միւսի քէշիկը քաշի ու ոչինչից Օթթէլօյի տասմալի պատմութունը սարքի, մէկը միւսի գլխին գդակ դնի: Հար մէկը, օրը մէկ գիմակ քաշի իրեսին՝ ամմա սրտի մէջ ուրիշ բան զգայ, լեզւի ծերին ուրիշ խօսք ունենայ: Զէ, չէ, էս ճամբէն անդունդը կը տանի, կը բաժանի, կ'ամուսնալուծի:

Բար աքս, հար մէկը իրա պարտականութունը կատարելուց բացի, պիտի աշխատի միւսին դուր գայ, աւելի սիրելի դառնայ, ընդուր էյրերը չը տեսնի, իրեսին չը խփի, ընդրա սիսաները իրա մօհաբաթով, ուշադրութունով սիրով վերացնի, իրա եսը մոռանայ ու էն մէկի եսին նւիրւի: Էս ճամբէն ուշ եա շուտ յաջողութան ու երջանկութան կը տանի:

Կինը չը պէտք ա ականջ դնի բաղի ֆուզուների խօսքերէն ու ցուցմունքներին որ շատ անգամ նախանձից



դրդւած էն խօսում.

— Քա աղջի, ես մարդիս իրես չ'եմ տալիս: Մէկ ասում ա տասը լսում: Ինչ որ էն ա անում, ես քսան անգամ աւել էմ անում, թա հաշիւն իմանայ: Կպնում էմ քեալին էս էմ ուղում, էն էմ ուղում, չի անում՝ բարկանում էմ, խոռվում էմ: Մէ խօսք ա ասում՝ իրեսս շուռ էմ տալիս: Մէ կնկա հետ ա խօսում՝ ես տասը տղամարդի հետ էմ լկրտում: Էն մէ ոտ ա փոխում՝ ես հինգ-տասը: Ագեար չէ, բա էլ հէ՞ր էն ասում որ հաւասարութուն կայ, կնիկն էլ իր իրաւուքն ունի:

Ու հըգար ու մէկ էսէնց խօսքեր:

Վա՞յ, վա՞յ, էն խեղճ կնիկներին որ զլոխներն էսէնց ա գործում: Իրանք իրանց ձեռով իրանց բաղրախտին էն սարքում. թող լաւ իմանան որ էս ճամբէն վերջնական կործանում ա տանում:

Նորաթը գալիս ա տղամարդկանց: Շատ շատերը էսէնց էն մտածում.

— Ես տղամարդ էմ՝ էն կնիկ, զալաթ ա արեր, իմ ասածս ու ուզածս պէտք ա էնի: Աւշունց էլ կը տամ, վատ էլ կասեմ: Էն ինչ իրաւունք ունի իմ գործերին խառնւի: Բա ես հէ՞ր էմ աշխատում ու տալիս որ ուտեն, թող ձէնները կտրեն թէ չէ մի սահաթում դուս կը զձեմ: Տղամարդը ինչ որ էլ անի պատիւը տեղը կը մնայ, հալամ մէ քիչ էլ կը բանձրանայ, ամմա կնիկը մէ աչք գձի, մէ խօսք խօսայ պատիւն՝ աշխարհից կը վերանայ:

Ու էս տեսակի չը վերջացող անթիւ միտքեր:

— Վա՞յ, վա՞յ, էսէնց մտածող տղամարդկանց: Էղպէսով իրանց կնկան խելքի չ'են բերի հիչի բագթար խորամանկ կը դարձնեն ու վերջն իրանք կը փոշմանեն:


Արդ անեմ խանումներիս իմթմաթին ագեար սիրում էն իրանց տղամարդուն, պէտք ա հըմէն խնդրում ընդուր սրտի ու հոգու մէջ մտնեն, հըմէնից առաջ ընդուր ուզած ձեռվ իրանց ցանկութունը իրագործեն: Հոգատար էնեն, հասկանան որ կեանքի հըգար ու մէկ դժարութունները ընդրան յոգնացընում էն, իրանք բատթար չ'անեն, տուն որ էկաւ, խօշ իրեսով, խօշ սօհրաթով, խօշ վարքով ընդուր նախօշ հալաթը փոխեն, ոչ թէ կրակ տան, աւելի վառեն, չը մոռանան իսկական իմաստն էս խօսքի, «Յաղցը լեզով օծը բնից կը հանեն:» Իրանց շորի, իրեսի, շնորհքի ու հըմէն ինչի գեղեցկութունը, թարմութունը, մաքրութունը օր օրի նորոգեն, իրանց ամուսինների հըմարնա քի հակառակն ընի ու էդ հըմէնը ուրիշներին նշանց տան ու իրանց մարդկանց զգւացնեն: Սիրուն հագնըւելը, անուշահոտութուն իրելը, քաղցը խօսալը, լաւ վարելը, անուշ ժպտալը, իրանց կեանքի ու հոգու, սրտի ու մտքի սարգոլը, նորաըրը, ընտիրն ու լաւը իրանց տղամարդկանց հըմար տան, ու զէյր աղ էդ ընտրանց հոգու աշխարհին, մտքին, թէ աւող ընեն, շաէր ա՝ շէէր սիրեն, արհեստաւոր ա՝ արհեստին կապւեն, կարդացող ա. զիտուն ա՝ իրանք էլ զիտութան հետեւեն, մէ խօսքով մարդու ուզածի, սիրածի, խտէալի պահապան հրեշտակն ընեն, ու ըստուր վրէն էլ իրանց ներողամտութան ողին աւելացնեն, տղամարդու մէջ տեսած էյրերը ոչ թէ քէնի ու վրէմի ճամբով ուղեն ուղղել, խէ՛յր, խէ՛յր, զէյրը մօմքէն ա, անկարելի ա, բարագս, աշք զոցելով, սիրելով, գուրգուրալով ու տղամարդու ուրիշ տեղ փնտուածը իրանք ստեղծելով՝ կը կարողանան տանել իրանց ծանդը բեռը ու դուս գալ յաղթական՝ պսակւած կընկայ դժւար ու սրբազն պարտականութան մէջ:

Ափսո՛ս, տեղ չըկայ, տղամարդինն էլ էկող անգամ:

ՍՈՒՍԱՆ ԲԱՋԻ

ՊԱՍԿԻԵԼ

III



— Կնիկը որ կայ մէ աջիբը-դարիք արարած ա: Ճիշտ ա որ առաջին տեսածիդ հրեշտակ ա երեւում, ամմա էդ հրեշտակային պաշտելի ու ցանկալի պատկերի տակ, հըզար ու մէկ էյք ու խորամանկութուն կայ թագնւած: Ասլան իրա խանուրդի մէջ, կնիկը, բնութան ու աշխարհի ծուծն ա, եանի լաւի ու վատի, քաղցրի ու դառնի, սիրոյ ու զզւանքի հը լէն հալառակ բաները իրա մէջն ունի: Ինչպէսդ որ զարգացնէք, ուսում տաք, մշակէք, էնէնց էլ կլնի: Ազեար փիս ճամրէն բռնաւ չիք փրկութուն, ազեար լաւ ճամրէն բռնաւ օղորթ-օղորթի հրեշտակ կլնի, ազեար իրա հալալին մնաց մէ օր էսէնց ա, մէ օր էնէնց:

Ազեար շուխիի-հըմէն շուխի մէ ճշմարտութուն ունի իրա մէջ-տեսակից բացատրենք, ասում էն՝ «կինը մէ տարեկանից թա տասը ճանճ ա, տասից տամնընինդ ծիծեռնակ ա, տամնընդից քան զրախտահաւ ա, քսանից քսանընինդ տատրակ ա, քսանընդից երեսուն աղաւնի ա, երեսունից քառասուն թութակ ա, քառասունից յիսուն բու ա, յիսունից վաթսուն ուրուր ա, վաթսունից ետոյ ոչ կին ա, ոչ թոչուն ա... ասլան ոչինչ ա»:

Արդ էնի, կնիկը որ կայ կատւի հալաթ ունի իրա բընութան մէջ: Էլրա համար էլ շաէրները կնկան շատ էն



կատւի նմանացնում: Արքան որ սիրես, փայփայես, գուրգուրաս, էնքան կը մոռայ, իրան քեզի կը քսի ու պոկ չի գայ: Ամմա, երբէք չը հաւատաս ու չը կարծես որ տարին տասնըրկու ամիս էդ հալաթում մնայ, մէկ էլ տեսար կը կատաղի, կը ճանկոի, եա հէնց քո աչքի առաջը քեզ կը թողնի ու կէթայ էն մէկի հետ հէնց էն մըհաբախը նշանց կը տայ:

Էս տեսակ ազեար ուզենք կնիկներից խօսանք վերջ չի ունենայ, հատորներ էլ որ զրենք էլը բաղի կը մնայ: Ասլան հէնց էդ պատճառաւ էլ աղամարդիկ իրանց հասկացողութան օրից մինչև իրանց մեռներու օրը կնիկներով էն ըդբաղւէ ու վերջն էլ ոչինչ չ'են հասկացէ ու թա աշխարհը կայ, չ'են էլ հասկանայ: Բնութան մէ հետաքրքիր համեմը, չաշնին, մազէն, լզաթն էլ հէնց էդ ա: Չունքի ազեար հասկանին հըմէն ինչ կը վերջանար: Էդ ա որ կնիկը անվերջանալի հանելուկն ա կեանքի: Կնիկը գարերի բարոյականի ու օրէնքների փոփոխութան հետ, տղամարդու բռնակալ ու տիրապետող կամքի ու ցանկութան հետ, օրը մէ տեսակ ա էլէ ու վերջն էլ էկեր տէսորւայ դէմքն ա առէ: Էլրկէն չ'ասեմ կնկայ ամէնալաւ, ամէնաքաղցր, ամէնամաքուր տեսակը մայրն ա:

Տղամարդը ազեար ուզում ա իրա կնկայ հետ խօշ էլնի, պէտք ա վիրեն ասածս զասթուրին հետեւ, ընտրա լաւ կողմերը զարգացնի ու էկպէսով իրա էյրերին էլ ճար կանի: Տըզամարդկանց ամմանամեծ էյրը էն ա որ ազեար իրանց կնիկներից յուսահատում էն ուրիշ տեղ էն փնտում իրանց խօշը բախտին: Ամմա ոչ մէ տեղ էլ չէն զթնում, որովհետեւ խմորը նոյնն ա, տեսքն ա տարբեր, էլը հէնց սոյն հայն ա դուս զալիս թոնիրից: Խօսք չը կայ արքեցողութունը, զումարը, անպարտաճանաչութունը մննձ էյրեր էն բազի տղամարդ-






կանց մօտ: Ամմա ծուռ նստենք դուզն ասենք, շատերը որ
էս էյբերն էլ չ'ունեն, կնիկների ձեւից աւելի էն քարար էլ-
նում թա ինքը էդ էյբերն ունացողները:

Կարճն ասեմ, իմ աղիդին, կնիկը իր տղամարդուն՝ իմ
դասթուր տւած ձեւով ագեար հետևի՝ աւելի լաւ խօշքախմի
կ'ստեղծի ընտանիքի մէջ՝ թա ինքը տղամարդը, որովհետև
ըստուր գլուխը կեանքի կոխով էնքան ա մաշղուլ, որ ինչ էլ
ուղի անի, բատթար կնկայ աչքին ծուռ կ'երեայ:

Էս սօհքաթը վերջացող չի, երբ ուզէք կընի էլը պոչը
բռնել:

ՍՈՒՍՍՆ ԲՍ.ՁԻ



ՊՍԱԿԻԵԼՈՒ ՀԸՄԱՐ

Աշխարհիս բանն էս ա : Թա 18-20 տարեկան էն՝ սի-
ր ահարւում էն, գժւում էն, զահը էն խմում, հէր էն մոռա-
նում, մէր էն մոռանում: Պսակւան, պրծան: Նայած հրզար
ու մէկ խնդիրների դասաւորման՝ եա մէ քանի օրից, եա մէ
քանի շաբաթից, եա ամսից, եա մէ քանի տարուց ետոյ
սկսում են ջարդել: Շատ-շատերը սազւում էն, գիմանում
էն, վերջը որ գժւար տեղն էն հասնում, եա՞ն՝ էն որ՝ տղա-
մարդն տարիքն առնում ա, մէ քիչ աւելի լաւ ա հասկանում
աշխարհի Փալտափէն ու անմահ Խայեամի չնաշխարհիկ
քառեակները: Մէ կողմից էլ կեանքը աւելի գժւարութուններ
ու գլխացաւանքներ ա ստեղծում իրա թազա-թազա վորիո-
խութուններով, տղամարդն էլ գժւարանում ա դիմանա, մախ-
սուսան որ կնիկն էլ հասնում ա քառասունին ու իրա 17-18
տարեկան հասակի կրիզը, բօհրանը աւելի ուժեղ ու զարրին
ա կրկեւում, մօլթափէթ ա էլնում որ, իրա հըմէն ջահե-
լութունն ու գեղեցկութունը մնաք բարեկի դուն էն հա-
սէ... էս ա էսօր էքուց կանհետանան: Մարդ ու կնկայ կոփ-
ւըն ու անհամաձայնութունը ետաքրքիր տեսք ա առնում:
Մէ օր հէնց էն կուռում որ՝ բադ ազ 13-20 տարի բաժանւելը
միակ ճարն ա թւում: մէ օր էլ հաշտուում էն ու թազադան
սիրահարւում իրարու: Մալարեայի տաքցոցի պէսդ էս բանը





կրկնում ա թա քի վերջը մէ կողի էլնի: Էսդուր գեղը շատերն իմացեր էն, ամմա իմ աղիզին էշթէրա էն գործածէ:

Տեսնում էս մէկ էլ եա մարդն ա գործով, առողջութան, եա մէ ուրիշ մահանով մէ հեռու գեղ, քաղաք եա երկիր էդում, եա կնկան ա զրկում ու էսէնց տարիներ մնում էս: Վերջս էլ՝ երբ իրար էն հասնում նորից, հըմէն բան արդէն խաղաղած, պրծած ա էլնում:

Մաղսուղս էն էր որ թազա պսակւողներն իմանան, էս գեղը էշթէրա չը գործածէն: Իմ աղիզին էս դրութունն էլ կեանքի թազա փոփոխութուններից ա առաջ գալի, ագնար զաղըմ վաղլժ էլնէր, կնրկը մարդի կատարեալ հաղանդս էր ու մարդս էլ ընչ էյը որ ունանար, կնկայ խաշըրս էսօր կպնէր, էգուց սըրտը կ'առնէր: Ամմա, հրմի մէ քըչ այեամը գորուեր ա, էդ ա որ ըմ աղիզին պսակւածները երբ տեսնում էն որ սազւուլը դժւարանում ա, պէտք ա պստրկ- պստրկ արձակուրդսեր առսեն: Եանի մարդը մէ 15-20 օրով ճամբորդի: Կորկը էրէխտքին ժողով մէ մէկ ամսով օդափոխութան էլժա: Դանի իրարից բաժանւեն: Էլը իրար որ ճարան խօշ կըլսնեն ու կը սազւեն: Էս իմ աղիզին աւելլի լաւ ա՝ թա ին քէ մէ օր էսէնց կուեն ու ըաժնւեն՝ որ մէկս արևելք էլժա ու էն մէկը արևմուտք, ու երբ պառաւեն էն ժամանակ իրար հանդրակեն: Ժայդէն ի՞նչ:

Ամեն վախտ մէ տեսակ հիւանդութուն կայ ու հըմէն հիւանդութուն մէ ճար ունի, ֆաղաթ պէտք ա ճարն անող ու գեղը գործածողն էլնի:

ՍՈՒՍԱՆ ԲԱԶԻ

b. Գ.

Տէրտէրների սօհբաթը չ'եմ մոռացէ: Մէ հատ էլ ուրիշ նամակ ա էկէ: Ասում էմ բալքամ Եկեղեցական Վար-



չութունը պէտք էղածը կարգադրի, ինձ էլ մէ լուր տայ, (էս էլ յայտարարութուն չի որ մենակ մէ տեղ ուղարկի), ագեար չէ օրնած բերանս կը բացեմ ու ինչ ճշմարտութուն որ կայ կ'ասեմ: Ինքը Սրբազանն էլ ինձ իրաւունք կը տայ, չունքի հէնց ինքն էր մէ օր էդ տէրտէրներից մէկին ասում «Համեստ եղիր...»

Ա. Բ.



ԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԵՍՆՔ




ԵՐԶԱԿԱՌՈՒԻՆ

Արդ էլնի մեր պարոն Սոկրատը հարց ա տւէ քի «Ի՞նչ
ա երջանկութիւնը»: Թա աշխարհն էլեր ա մարդիկ վագեր
էն ըտրա ետևից իրանց գործով, խելքով ու հրմէն միջոցնե-
րով ու վերջն էլ չեն ճարէ: Լաւ-լաւ պատմութուններ, սի-
րուն-սիրուն բանաստեղծութուններ էն գրէ ու ոչ մէ տեղ
չեն հասէ:

Մէ սիրուն պատմութուն կար որ զագիմ մէ թագաւոր
իրա աղջիկը բժշկելու հրմար երջանիկ մարդու շապիկ ա
փնտոէ, իրա երկրի մէջ չի գլէ, վերջն էլ որ մէկին գլեր էն,
մարդը տկլոր ա էլէ շապիկ չի ունացէ:

Մեթերլինգի թիթիլն ու Միթիլն էլ ուր ասես գնացեր
